№ 180 ՈՒՐԲԱԹ, 17 ՕԳՈՍՏՈՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 17 ՕԳՈՍՏՈՍԻ № 180

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Քիսում կրվում են խմբագրատանը.

Հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի 8 ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՐՈՒԲԼԻ։

Օգոստոսի 1-ից մինչև սեպտ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակաղրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. հրատարակողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«ՄՇԱԿԻ» ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ հրատարակութեամբ
Հոյս տեսաւ եւ վաճառվում է
Լ. ԴԱՆԻԷԼԵԱՆԻ կազմած

„ՄՇԱԿԻ“ ՔԱՌԱՆԱՄԵԱԿ (1872–1912)

Հանդերձ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Բաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի և Հ. Առաքելեանի պատկերներով։
Գիրքը բաղկացած է 132 էջից, տպված է ամենալաւ թղթի վրա եւ պարունակում է իր մէջ «Մշակի» 40 տարվայ համառօտ պատմութիւնը, բոլոր խոշոր երեւոյթների, բնետրիստ. երկերի, նշանաւոր յօդուածների եւ այդ ժամանակագրիչոցում «Մշակի» ունեցած աշխատակիցների եւ թղթակիցների անունների յիշատակութիւնը։

ԳԻՆՆ Է 50 ԿՕՊ.

Պահեստը Թիֆլիսում, «Մշակի» գրասենեակում։

«Մշակի» բաժանորդները ճանապարհածախք չեն վճարում։

ԳՐՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԱՐԴԻՒՆՔԸ ՅԱՏԿԱՑՎՈՒՄ Է «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻՆ։
(առ.) 0—20

«ՄՇԱԿԻ» ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ՅԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ հրատարակութեամբ
Հոյս տեսաւ եւ վաճառվում է

„ՄՇԱԿ“ ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ

(«Մշակի» 40-ամեայ յօբելեանի առիթով)

I հատոր

Այդ հատորի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչև 1891 թւականը «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և բանասիրականները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և մասնաւորապէս հայ կնոջ առաջադիմության գործին։
Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրաւիր պատկերով։

ԳԻՆԸ ՄԷԿ ՌՈՒԲԼԻ։

Պահեստը Թիֆլիսում, «Մշակի» գրասենեակում։

«Մշակի» բաժանորդները ճանապարհածախք չեն վճարում։

ԳՐՔԻ ՎԱՃԱՌՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԱՐԴԻՒՆՔԸ ՅԱՏԿԱՑՎՈՒՄ Է «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻՆ։
(առ.) 0—23

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ՕԲՕՒ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Դօլ. պր. 21, տուն Արխիստական Ընկ., տելէֆոն № 355.
Պահեստումները կան մեծ բանկուբեամբ բնեիր պատասխաներ ամենամերձին սեիլով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր ռուլօն։
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում։
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԶԱՐԻ։
(ե.ու) առ. 154. 50—46

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համալի Մասահարեիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
ԳԻՆՆ Է 30 կօպ.
(Ճանապարհածախքով՝ 38 կոպ.)
Այս գրքի վաճառումից գոյացալիք գումարը յատկացվում է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին։
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ“, կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak“

ՀԱՄԱՌՏԱՍԱԾ ՄՇՈՒՇ

Այս ամառ մեր երկիրը գտնվում է մի օտարոտի մշուշի մէջ։

Մենք առիթներ ունենալով ճանապարհորդելու մեր երկրի զանազան մասերում, նկատեցինք մշուշը գեռ յուլիսի 6—10-ին Գանձակի, Ջիվանշիրի և Շուշու գաւառներում, այնուհետև Զանգեզուրում, Նախիջևանի և Երևանի գաւառներում, Բօրչալուի և Թիֆլիսի գաւառներում։ Հետ յուլիսի վերջերին Հանքային Ջրերի շրջանում։ Մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մշուշը շատ տեղերում գրաւել է իր վրա յատուկ ուշադրութիւն իր առանձին թանձրութեամբ և մեծաչափ բնաւորութեամբ։

Մշուշը այդպիսով պատել է թէ կուրի և թէ Արաքսի աւազանը, թէ ձոր ու հովիտները և թէ լեռնատամները, թէ Անդրկովկասը և թէ Հիւսիսային Կովկասի մի քանի տեղերը։

Ամարային մշուշներ եղել են և ուրիշ տարիներ։ բայց այնպիսի համառաստած մշուշ, որը նկատում ենք այս տարի, հազուագիւտ երևոյթ է։

Ի՞նչ է այդ մշուշը։ Ի՞նչ ծագում ունի նա։ Ի՞նչ ազդեցութիւն ունի նա բոյսերի աճման և մարդկանց առողջութեան վրա։

Ահա մի շարք հարցեր, որոնք հանդէս են գալիս մեր առաջ։

Դժբաղդաբար՝ գիտութեան մէջ բաւականաչափ պարզված չեն մշուշների վերաբերեալ նիւթերը։

Մեր ժողովրդի մէջ մշուշները նկատվել են իբրև ՁՄասակար երևոյթներ, իբրև ցորենին և առհասարակ հացահատիկներին ՁՄասող հանգամանքներ. նրանք ծանր են ազդում նոյնպէս խաղողի և բամբակի ցանքսերի վրա. նրանք թուլացնում են մեղուների գործունէութիւնը։

[illegible] այս տարի, որ մշուշի երևալը ցամաքեցրեց հացահատիկների ծղօները և հասկերը. երկու օրվայ մէջ արտերը փչացան, բոյսերը կորցրին իրանց կենդանութիւնը։

Մշուշը չորացնող և խեղդող օդի տպաւորութիւն է գործում բոյսերի վրա—ահա գլխաւոր կարծիքը նրա մասին։

Մի բան մնիթարական է, որ մշուշները շատ տեղերում սկսեցին երևալ, երբ արդէն արտերը հնձված էին և հացահատիկները ազատվել էին նրանց ազդեցութիւնից. իսկ լեռնատամներում մշուշները այնքան խիստ և թանձր չէին, ինչպէս ստորադիր հովիտներում։

Բայց մի հարց է առաջ գալիս, թէ արդեօք այս տարվայ մշուշները նոյն ծագումը և բնաւորութիւնն ունեն՝ ինչ որ ուրիշ տարիների մշուշները, որոնք յայտնի են «մրաժ», «մուժ», «բիլլքիս» անուններով, թէ դրանք մի ուրիշ երևոյթի արտայայտութիւններ են։

Մեր տրամադրութեան տակ եղած տեղեկութիւնները հիմք են տալիս ենթադրելու, որ այս տարվայ մշուշները բոլորովին տարբեր են ուրիշ տարիների մասնաւոր մշուշներից և միայն տեղ-տեղ զուգակցել են այս տարվայ մշուշին և սովորական մշուշները։ Մեզ, օրինակ, հաղորդել են Անիի շրջանից, որ այնտեղ յուլիսի 8-ից սկսված մուժը շարունակվեց մօտ 8 օր զարմանք պատճառելով գիւղական հասարակութիւններին։

Մուժը այնքան թանձր էր, ինչպէս ձմեռվայ մառախուղը կամ չանգը, և մի կէս վերստ տարածութեան վրա անկարելի էր նշմարել իրերը։

Թիֆլիսի օդերևոյթաբանական դիտարանը ստացել է տեղեկութիւն, որ ներկայ մշուշը երևացել է յունիսի վերջերին Անդրկասպեան երկրում՝ Ղզըլ-Արվատի և Կրասնովոդսկի շրջանում, իսկ յետոյ յուլիսի սկիզբներին Լենքօրանի, Զէվադի և Բագուի գաւառներում։

Թէ ինչ ազդեցութիւն պէտք է ունենայ ներկայ մշուշը՝ մենք անկարող ենք այժմ ասել որևէ որոշ բան։

Բայց, անշուշտ, ցանկալի է, որ մեր գաւառական դիտողները հաղորդէին մեզ տեղեկութիւններ այն բայսական երևոյթների մասին, որոնք նկատվել են իրանց դիտողութիւնների շրջանում։ Գուցէ հաւաքական ուսումնասիրութիւնների միջոցով կարողանանք պարզել օտարոտի մշուշը, որ մինչև այժմ շարունակում է յայտնվել մեր երկրի շատ տեղերում։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 օգոստոսի

Պեստիզօրսկ.—Ժամանեց Փոխարքան։

Թիֆլիս. — Կաղզուանից պարսկական սահմանագլուխն են ուղարկվել Եյսկի կօզակների գնդից չորս հարիւրեակ։

Պոդեսաուլ Բաշտաննիկը, որ վիրաւորված էր շահսէվանների հետ ունեցած ընդհարման ժամանակ 9 գնդակներով, բոլորովին կազդուրվել է։

Նովոչերկասկ.—Սամարայի պօստային բաժանմունքից 11 հազար ռուբլի կողոպտելու մէջ մեղադրվող Աւգուչենկօն զինուորական շրջանային դատարանի վճռով դատապարտված է մահվան պատժի՝ կախաղան հանելով։

Պարիզ.—Հաւատին հեռագրում են Կազաբլանկից, որ Խալիֆատի և Էլհիբի զորքերը օգոստոսի 11-ին Սիւքելարբին մօտիկ յարձակում են գործել ֆրանսիական զօրաբանակի վրա։ 6 ժամվայ կռուից յետոյ յարձակումը յետ մղվեց։ Թշնամին մեծ կորուստներով յետ դահանջեց. ֆրանսիացիներից վիրաւորվել են 4 հոգի։

Բերլին.—«Ֆոսսիշէ-Յայտունգին» հեռագրում են Աթէնքից, որ Իկարիա կղզին կառավարող կոմիտէտը տեղեկացրել է մեծ պետութիւնների դեսպանութիւններին՝ Իկարիա ազատ պետութիւն կազմվելու մասին։

Բերլին.—Կայսրի առողջութեան մասին հաղորդում են, որ բորբոքման երևոյթներն ու ցաւերը դադարել են։ Կատարելապէս առողջանալու համար կայսրը պէտք է դեռ մի քանի օր էլ զգուշութիւն պահպանէ։

Բուդապեշտ.—«Անապ» լրագիրը կոմս Բերհտոլդի Բումինիա գնալու առիթով յայտնում է, որ կոմս Բերհտոլդը Բումինիային խոստացել է տալ Բեսարաբիան, եթէ Բումինիան միանայ եռապետեան դաշնակցութեանը Իտալիայի փոխարէն, որը հեռանում է կազմից 1914 թւին։ Եռապետեան դաշնակցութեանը հարկաւոր է 1 միլիոն բումինական զինուոր, որպէսզի փակի Ռուսաստանի մուտքը դէպի Բալկանները։

Վաշինգտոն. — Մեծ-Բրիտանական գործերի հաւատարմատարը պետական դեպարտամենտին յանձնեց մի նոտա, որը ասում է՝ թէ Պանամայի Ջրանցքի վերաբերմամբ ընդունված բիլլի առիթով համաձայնութիւն չը կայանալու դէպքում Մեծ-Բրիտանիան կը դիմէ Հագայի միջազգային դատարանին։

Կալկաթա.— Լրագիրների ասելով, լորդ Նիկոլսոնի նախագահութեամբ Սիմլայում խորհրդակցող զինուորական մանաժողովը առաջարկել է արձակել հնդկական տեղական 27 գնդեր և Անգլիա վերադարձնել անգլիական 6 բատալիոններ։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

15 օգոստոսի

Կ. Պոլիս.—Բ. Դրան ասելով, չերնոգորցիները Բէրանից դէպի հիւսիս Թիւրքական սահմանի վրա բլոկհաուզ են դրել։

Դիակօվոյի մօտերքում հաւաքվել են 2000 ալբանացիներ։

Օսմանեան գործակալութիւնը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում.

1) «Բ. Դրան ստացած հեռագիրները վճռականապէս հերքում են Բելգրադի տեղեկութիւնները Սենիցում և Բելգրադում կատարված սերբական ջարդերի մասին։ Միջադէպը վերաբերում է տեղական ազգաբնակութեան երկիւղին, լսելով որ ալբանացիները Իպէկում գրաւել են զինապահեստը։ 2) «Բ. Դրան վերաբերմունքը դէպի հարեւան պետութիւնները չեն արդարացնում լրագրական տեղեկութիւնները։ Թիւրքիայի և Բուլգարիայի յարաբերութիւնները, ինչպէս անցեալներում, այժմ էլ լաւ են։ Կառավարութիւնը դատ չէ, այլ մի արտակարգ դէպք։ Մեր առաջ արձանացած է ոչ սովորական յանցագործը և ոչ ոճիրների գարհուրելի մէջ կռնված, կատարելագործված աւազակապետը։ Այսօր մեր առաջն է ուսուցիչը։

«Ո՞վ է ուսուցիչը։

«Դա մի միութիւն չէ։ Անհատ չէ։ Դա մի էպօխա է։ Ամբողջ մի հասարակութիւն։ Դա մեր մանուկ հասարակութեան անկեղծ բարեկամն է։ Մանուկների սրբազան կուռքը։ Անմեղ հոգիների գերագոյն հաւատը։ Նրանց քաղցր ներշնչումների, մաքրափայլ յոյզերի վերասլացման վիթխարի շարժիչ մեքենան։ Դա՝ մատաղ մտքին վարդագոյն իդէալներ, անանց, երազուն ապագայ սուլողը։ Անապատների անմոլար, անշեղ ուղեցոյց աստղը։ Դա՝ այն մշտափոփոխող դրօշակը, որին հետևում են մեր սերունդների, մեր ապագայ յոյսերի, իրազործումների մատաղ շարանները։ Այո, դա՝ ազգերի ապագան կերտող մեծ արուեստագէտը։ Ծովածուփ, խորտակող ալիքների դէմ անսասան ժայռը։ Գերեզմանների մահաստուն խաւարի դէմ պայքարող առատաբուղխ լուսոյ փարոսը։ Մարդկութեան զգայուն, կենդանի ջիղը։

«Եւ ինքը միշտ երազուն։ Դիւրագրգիռ, դիւրահաւատ։ Կենսաթրթիռ, հոգևոր պատանի։ Աշխոյժների անյատակ ծով։ Վսեմ գաղափարների թարմացուցիչ աւազան։ Վսեմը, առաքինին կերտող բով։

«Այո, պարոնայք դատաւորներ, ձեր առաջ ոչ սովորական յանցագործ։ Մանուկ, անմեղ հասարակութեան սիրելին էր, որ նշաւակութեան նպատարանն էր արծանացել։

Նա լուռ էր։ Մի խորհրդաւոր թախիծ և դառն յանդիմանանք էր նշմարվում նրա անվեհեր դէմքին։

Մեղադրական գործի ընթերցումից և վկաների ցուցմունքը լսելուց յետոյ՝ նախագահը հարց տուեց.

— Մեղադրվել, ձեզ պաշտպանելու առիթով ինչ ունէք ասելու։

— Ես... ուսուցիչ եմ...,—հակիրճ արտասանեց Երկանեանը և լռեց։

— Միայն այդքան. ուրիշ ոչինչ։

— Ոչի՛նչ։ Մնացածը թողնում եմ պաշտպանիս։

— Խօսքը ձերն է, պ. դատախազ,—դարձաւ նախագահը։

— Ես կատարված յանցանքը ապացուցված համարելով՝ երկար ասելիք չունեմ. միայն խնդրում եմ օրէնքի որոշ յօդուածների համաձայն պատժի ենթարկել մեղադրեալին, որովհետև նա որպէս ուսուցիչ և կրթված անձ՝ իր կրքերը պիտի զսպէր և երբէք չը դիմէր կողիտ, գռեհիկ միջոցների։

— Պարոն պաշտպան, խօսքը ձերն է,—շարահարեց նախագահը։

«Պարոնայք դատաւորներ,—սկսեց խօսել Երկանեանի պաշտպանը,—նախ և առաջ ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ այն եւրևոյթի վրա, որ ներկայ դատը սովորական յանցագործը։ Մանուկ, անմեղ հասարակութեան սիրելին էր, որ նշաւակութեան նպատարանն էր արծանացել։

Նա լուռ էր։ Մի խորհրդաւոր թախիծ և դառն յանդիմանանք էր նշմարվում նրա անվեհեր դէմքին։

Մեղադրական գործի ընթերցումից և վկաների ցուցմունքը լսելուց յետոյ՝ նախագահը հարց տուեց.

— Մեղադրվել, ձեզ պաշտպանելու առիթով ինչ ունէք ասելու։

— Ես... ուսուցիչ եմ...,—հակիրճ արտասանեց Երկանեանը և լռեց։

— Միայն այդքան. ուրիշ ոչինչ։

— Ոչի՛նչ։ Մնացածը թողնում եմ պաշտպանիս։

— Խօսքը ձերն է, պ. դատախազ,—դարձաւ նախագահը։

— Ես կատարված յանցանքը ապացուցված համարելով՝ երկար ասելիք չունեմ. միայն խնդրում եմ օրէնքի որոշ յօդուածների համաձայն պատժի ենթարկել մեղադրեալին, որովհետև նա որպէս ուսուցիչ և կրթված անձ՝ իր կրքերը պիտի զսպէր և երբէք չը դիմէր կողիտ, գռեհիկ միջոցների։

— Պարոն պաշտպան, խօսքը ձերն է,—շարահարեց նախագահը։

«Պարոնայք դատաւորներ,—սկսեց խօսել Երկանեանի պաշտպանը,—նախ և առաջ ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ այն եւրևոյթի վրա, որ ներկայ դատը սովորական

— Ես... քաղցած... դուրս վռնտված...

— Այո, այո, դու... դու... օձ պարացնող... անպէտք վարժապետը։ Ի՞նչ մարդ ես դու։

— Ես ինչ մարդ եմ...,—լսվեց Երկանեանի ահարկու ձայնը, արիւնը գլխին տուեց, աչքերը մթնեցին, իրան կսպելու անկարող՝ Երկանեի ձեռնափայտը կայծակի արագութեամբ վեր բարձրացրեց և ամենայն թափով իջեցրեց յանդուգն ջրաշրջի գանգին։

Մեկ... երկու... և սարափանցի Օվակիմը արիւնաշաղախ, ջարդված գանգով երիվարից ցած գլորվեց որպէս անպէտք մի պարկ։

— Ահա ես ի՛նչ մարդ եմ, այժմ ճանաչի՛ր,—մռնչաց վիրաւոր վագրի կերպարանափոխված ուսուցիչը։

Աղմուկ, շփոթ, իրարանցում, աղաղակ, սուլիչների շառաչ ճչոցներ, ոստիկանութիւն, արձանագրութիւն։

Երկանեանը խնդրեց արձանագրութեան մէջ մտցնել. «Ես...օձ պարացնող չեմ... ես վարժապետ եմ... մանուկների անկեղծ բարեկամը...»։

Զ.

Ուսուցիչ Երկանեանը յանձնված էր արդարադատութեան ձեռքը։

Գործը քննվում էր նահանգական ատեանում։ Նա մեղադրվում էր ծանր հարուածներ հասցնելու գործում։

Այս անգամ մեղադրեալների նստարանում տեղ էր գրաւել ոչ սովորական յանցագործը։ Մանուկ, անմեղ հասարակութեան սիրելին էր, որ նշաւակութեան նպատարանն էր արծանացել։

Նա լուռ էր։ Մի խորհրդաւոր թախիծ և դառն յանդիմանանք էր նշմարվում նրա անվեհեր դէմքին։

Մեղադրական գործի ընթերցումից և վկաների ցուցմունքը լսելուց յետոյ՝ նախագահը հարց տուեց.

— Մեղադրվել, ձեզ պաշտպանելու առիթով ինչ ունէք ասելու։

— Ես... ուսուցիչ եմ...,—հակիրճ արտասանեց Երկանեանը և լռեց։

— Միայն այդքան. ուրիշ ոչինչ։

— Ոչի՛նչ։ Մնացածը թողնում եմ պաշտպանիս։

— Խօսքը ձերն է, պ. դատախազ,—դարձաւ նախագահը։

— Ես կատարված յանցանքը ապացուցված համարելով՝ երկար ասելիք չունեմ. միայն խնդրում եմ օրէնքի որոշ յօդուածների համաձայն պատժի ենթարկել մեղադրեալին, որովհետև նա որպէս ուսուցիչ և կրթված անձ՝ իր կրքերը պիտի զսպէր և երբէք չը դիմէր կողիտ, գռեհիկ միջոցների։

— Պարոն պաշտպան, խօսքը ձերն է,—շարահարեց նախագահը։

«Պարոնայք դատաւորներ,—սկսեց խօսել Երկանեանի պաշտպանը,—նախ և առաջ ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ այն եւրևոյթի վրա, որ ներկայ դատը սովորական

ամբոխը, որոնց վերև բարձրանում էր Օվակիմի ահարկու, հատաքուն իրանը, վերդովմունք յուզող ամբարտաւանութեամբ։

— Պարոն Յովակիմ,—զայրոյթը զսպելով բացականչեց նա,—ջրի հերթին մենք ձրբ կարժանանանք։

Դիտմամբ Օվակիմը անուշադիր մնաց և իր խօսքի շեշտը աւելի ուժեղացրեց դէպի իր հարստահարված աղերսարկուները։

— Ձեզ եմ ասում, պ. Յովակիմ, անջուր մեռանք, ձրբ ջուր կը տաք,—համբերութիւնից պայթելով ասաց Երկանեանը։

—Մեռնում ես, մեռիր, առանձին կորուստ չը կայ։

— Ի՞նձ ես ասում,—բռնկվեց վարժապետը։

— Հա, քեզ եմ ասում։ Դու մեռնես, ոչինչ. անհարկաւոր ես. այ, Աստուած մի արասցէ Գասպար աղայի նման մարդկանց թանգագին կեանքերը պակասեն. ինչ կը լինի մեր հալը։ Դու ով ես որ նրա մօտ,—հեգնեց Օվակիմը։

— Ի՞նչպէս ես համարձակվում. գիտես ես ով եմ։

— Շատ լաւ գիտեմ, եփած կը ճանաչեմ քեզ։

— Ես քո ճանաչածներից չեմ։ Ես վարժապետ եմ...,—հպարտութեամբ բացականչեց Երկանեանը։

— Հա, գիտեմ... դուրս վռնտված... քաղցած վարժապետը,—շեշտեց Օվակիմը դառը, հեգնող ժպիտով։

ցագործը։ Մանուկ, անմեղ հասարակութեան սիրելին էր, որ նշաւակութեան նպատարանն էր արծանացել։

Նա լուռ էր։ Մի խորհրդաւոր թախիծ և դառն յանդիմանանք էր նշմարվում նրա անվեհեր դէմքին։

Մեղադրական գործի ընթերցումից և վկաների ցուցմունքը լսելուց յետոյ՝ նախագահը հարց տուեց.

— Մեղադրվել, ձեզ պաշտպանելու առիթով ինչ ունէք ասելու։

— Ես... ուսուցիչ եմ...,—հակիրճ արտասանեց Երկանեանը և լռեց։

— Միայն այդքան. ուրիշ ոչինչ։

— Ոչի՛նչ։ Մնացածը թողնում եմ պաշտպանիս։

— Խօսքը ձերն է, պ. դատախազ,—դարձաւ նախագահը։

— Ես կատարված յանցանքը ապացուցված համարելով՝ երկար ասելիք չունեմ. միայն խնդրում եմ օրէնքի որոշ յօդուածների համաձայն պատժի ենթարկել մեղադրեալին, որովհետև նա որպէս ուսուցիչ և կրթված անձ՝ իր կրքերը պիտի զսպէր և երբէք չը դիմէր կողիտ, գռեհիկ միջոցների։

— Պարոն պաշտպան, խօսքը ձերն է,—շարահարեց նախագահը։

«Պարոնայք դատաւորներ,—սկսեց խօսել Երկանեանի պաշտպանը,—նախ և առաջ ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ այն եւրևոյթի վրա, որ ներկայ դատը սովորական յանցագործ։ Մանուկ, անմեղ հասարակութեան սիրելին էր, որ նշաւակութեան նպատարանն էր արծանացել։

Նա լուռ էր։ Մի խորհրդաւոր թախիծ և դառն յանդիմանանք էր նշմարվում նրա անվեհեր դէմքին։

Մեղադրական գործի ընթերցումից և վկաների ցուցմունքը լսելուց յետոյ՝ նախագահը հարց տուեց.

— Մեղադրվել, ձեզ պաշտպանելու առիթով ինչ ունէք ասելու։

— Ես... ուսուցիչ եմ...,—հակիրճ արտասանեց Երկանեանը և լռեց։

— Միայն այդքան. ուրիշ ոչինչ։

— Ոչի՛նչ։ Մնացածը թողնում եմ պաշտպանիս։

— Խօսքը ձերն է, պ. դատախազ,—դարձաւ նախագահը։

— Ես կատարված յանցանքը ապացուցված համարելով՝ երկար ասելիք չունեմ. միայն խնդրում եմ օրէնքի որոշ յօդուածների համաձայն պատժի ենթարկել մեղադրեալին, որովհետև նա որպէս ուսուցիչ և կրթված անձ՝ իր կրքերը պիտի զսպէր և երբէք չը դիմէր կողիտ, գռեհիկ միջոցների։

— Պարոն պաշտպան, խօսքը ձերն է,—շարահարեց նախագահը։

«Պարոնայք դատաւորներ,—սկսեց խօսել Երկանեանի պաշտպանը,—նախ և առաջ ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ այն եւրևոյթի վրա, որ ներկայ դատը սովորական

դատ չէ, այլ մի արտակարգ դէպք։ Մեր առաջ արձանացած է ոչ սովորական յանցագործը և ոչ ոճիրների գարհուրելի մէջ կռնված, կատարելագործված աւազակապետը։ Այսօր մեր առաջն է ուսուցիչը։

«Ո՞վ է ուսուցիչը։

«Դա մի միութիւն չէ։ Անհատ չէ։ Դա մի էպօխա է։ Ամբողջ մի հասարակութիւն։ Դա մեր մանուկ հասարակութեան անկեղծ բարեկամն է։ Մանուկների սրբազան կուռքը։ Անմեղ հոգիների գերագոյն հաւատը։ Նրանց քաղցր ներշնչումների, մաքրափայլ յոյզերի վերասլացման վիթխարի շարժիչ մեքենան։ Դա՝ մատաղ մտքին վարդագոյն իդէալներ, անանց, երազուն ապագայ սուլողը։ Անապատների անմոլար, անշեղ ուղեցոյց աստղը։ Դա՝ այն մշտափոփոխող դրօշակը, որին հետևում են մեր սերունդների, մեր ապագայ յոյսերի, իրազործումների մատաղ շարանները։ Այո, դա՝ ազգերի ապագան կերտող մեծ արուեստագէտը։ Ծովածուփ, խորտակող ալիքների դէմ անսասան ժայռը։ Գերեզմանների մահաստուն խաւարի դէմ պայքարող առատաբուղխ լուսոյ փարոսը։ Մարդկութեան զգայուն, կենդանի ջիղը։

«Եւ ինքը միշտ երազուն։ Դիւրագրգիռ, դիւրահաւատ։ Կենսաթրթիռ, հոգևոր պատանի։ Աշխոյժների անյատակ ծով։ Վսեմ գաղափարների թարմացուցիչ աւազան։ Վսեմը, առաքինին կերտող բով։

«Այո, պարոնայք դատաւորներ, ձեր ա-

*) Տես «Մշակ» № 179.

հրամայել է, ուրիշներին իբրև օրինակ, պատժել այն պաշտօնեաներին, որոնք մեղաւոր են իրանց պարտականութիւնները թերանալու մէջ։ Ագիտատորները, որոնք ձգտում են զրգռել Բոլգարիայի հասարակական կարծիքը, գիտեն ռուսերի ծագման մասին, որոնք սպանում են ոչ միայն բոլգարներին, այլև մուսուլմաններին և հրէաներին։ Ցայտնի միջադէպով պայմանաւորված աղմուկը չէ կարող մոլորեցնել միջազգային հասարակական կարծիքը»։

Բ. Դրանը հաղորդում են, որ Զերնոգօրիան օգոստոսի 13 ից սկսել է իրանց տեղերը վերադարձնել զէնքի կոչված զօրքերը։

—

Մալթա.—Ի նկատի առնելով, որ Կրետէ կղզու վիճակը երկիւղալի է դառնում, անգլիական «Դիանա» յածանաւը երկու օր առաջ այստեղից մեկնեց դէպի Կրետէ։

—

Լոնդոն.—Սամօսի ջրերն են ուղարկված անգլիական և ֆրանսիական յածանաւեր՝ արգելք լինելու Կրետէ կղզու վրա կազմակերպված կամաւորների զինված ոյժերին ցամաք իջնելու, որոնք մտադիր են միացնելու Սամօսը Յունաստանի հետ։

—

Հռոմ.—«Կօրիէրօ դէ Վասերան» կտրական կերպով հաստատում է Իտալիայի և Թիւրքիայի միջև խաղաղութիւն կնքելու նպատակով մասնաւոր նախնական բանակցութիւններ սկսելու լուրը։

—

Հռոմ.—Ի նկատի առնելով, որ Թիւրքիան ընդունում է Տրիպոլիտանիի և Կիրէնաիկիի կորուստը, նոյնպէս և իտալական կաբինէտի համաձայնութիւնը՝ պաշտօնապէս ճանաչելու Բ. Դրան գերիշխանութիւնը, Իտալիայի դեկավարող շրջաններում հաւանական են համարում խաղաղութիւն կնքելը Թիւրքական զօրքերը յետ կանչելու պայմանով։ Բոլոր դժուարութիւնը կղզիների վերաբերեալ հարցերումն է, որի լուծմամբ շահագրգռված են պետութիւնները։ Լաւատեղեակ շրջաններում խօսում են, որ Իտալիան չի համաձայնի կղզիները վերադարձնելու հասարակ ձևի՝ առանց երաշխաւորութիւն տալու յօգուտ ազգաբնակութեան, որը դիմաւորել է իտալական զօրքերին իբրև ազատարարների։

—

Կ. Պօլիս.—Բէյրութի նաւահանգիստն եկան իտալական վեց յածանաւեր։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 12 օգոստոսի

Բազմատանջ Ղարադաղը, համեմատած նախկին վիճակի հետ, խաղաղ է ու հանգիստ՝ չնորհիւ ռուսաց հզօր ազդեցութեան։ Թուրմանեանց գիւղերի ընդհանուր կառավարիչ և ռուսաց հիւպատոսական գործակալ Սարգիս Յովհաննէսի գործունէութեան համար ստանում ենք գոհացուցիչ տեղեկութիւններ։ Նրա աշխուժ պաշտպանութեան և հսկողութեան շնորհիւ գիւղացիք վայելում են ապահով գրութիւն։

Դզմարի պատուհաս Քեարիմ-խանի Թաւրիզից փախուստը յայտնի է «Մշակի» ընթերցողներին։ Մաշիդ-ուլ-Դօվլէ Քեարիմ-խանը իր շուէնը շահսէվանների մէջ առաւ, որպէս զի Նրանց հետ միացած կուռ սարդար Մաշիդ-Մուլքի դէմ՝ վրէժն առնելու համար։ Նրա յանկարծական փախուստից յետոյ սարդար-Մաշիդ-Մուլքի և նահանգապետի համատեղ ճնշով հրաման ուղարկվեց Ահարի դատաւորին, ուր Քեարիմ-խանի գիւղերում բնակվող երկրագործ հայ գիւղացիք տուրք և տասանորդ տալուց ազատ լինեն, միայն որ լրիւ հաշիւ առնվի գիւղացիների 15,000 թուման պահանջը և վերջին հրկիզումներից ու թալանից առաջացած բոլոր վնասները։ Նահանգապետութեան որոշումն և հրամանը գործադրվում է արդէն Ղարադաղում ի բաւարարութիւն Դզմարի հայ գիւղացիների։

Սալմաստում սավրացի հայ ու թուրք գիւղացիների կրած տառապանքը գիւղատէր Հաջի-Մահմէդ-Թաղիից՝ գրել էի իմ նախորդ թղթակցութեան մէջ։ Գիւղացիների բողոքների վրա՝ փոխանորդ Կարապետ քահ. Մանուկեան երկիցս դիմեց Նահանգապետին և ռուսաց հիւպատոսին։ Նահանգապետը հեռագրով պահանջեց գիւղացիներին և գիւղատիրոջ գալ Թաւրիզ։ գիւղացիք եկել են արդէն, բայց ըմբոստ Հաջի-Թաղին դեռ չէ եկել, մինչդեռ գիւղացիների կալերը մնացել են անտէր։

Խոյի մօտիկ Սէյդավար գիւղի հայ գիւղացիներից 30 ընտանիքի ռուսադաւանութիւն ընդունելու լուրը պաշտօնապէս ըստուգվեց՝ Խոյի գործակալ քահանայի գրած պաշտօնական գրութեամբ՝ ուղղված Թաւրիզի թեմական խորհրդին։ Սէյդավարցիների դաւանափոխութեան գլխաւոր պատճառները թէև բացորոշ չեն, սակայն ի՞նչ կասկած, որ տեղական կառավարութեան և խաների գործ դրած ճնշումների և նեղութիւնների հետևանքն են։ Սէյդավարցիք դիմել են Խոյի ռուսաց հիւպատոսին և յայտնել իրանց ցանկութիւնը։ Մոհամ հիւպատոսը 30 օր ժամանակ է տուել հայերին, որ լաւ մտածեն, կշռեն և պայմանաժամը լրանալուց յետոյ նորից դիմեն հիւպատոսին իրանց փափագն իրագործելու։

Դաւանափոխութեան ձգտեր լսվում են նմանապէս Ուրմիայից և Միանդաբից՝ բրոնապետութեան երեսից։ Ի՞նչ պիտի ելնի անպաշտպան հայերի վիճակը։ Այսպիսի մի պատասխանատու ժամանակ է, որ Ատրպատականի առաջնորդը բացակայ է և հօտը ենթակայ է վտանգի և կորստեան։ Ցուլիս ամսվայ սկիզբներին գրված է Կարապետ եպիսկոպոսին դաւանափոխական ձգտումների մասին՝ առաջարկելով իրերի վիճակը տեղեկացնել հոգևոր բարձր իշխանութեան և խնդրել, որ մի կարող վարդապետ ուղարկվի Ատրպատականի գաւառները ոգևորելու և մխիթարելու առանց այն էլ լքված հայ հասարակութիւնը։ Սրբազանն արդէնք դրութիւնն հաղորդել է Վեհին և դարման խնդրել։ և արդեօք հոգևոր բարձր իշխանութիւնը մտածում է մի բուժիչ հնար վերահաս կորստեան առաջն առնելու համար։

Առիթ ունեցել եմ միտք գրելու, որ Ատրպատականի թեմի համար պէտք է ուղևորել խօսքի ու կամքի տէր թեմական, որ կարողանայ ըմբռնել կացութիւնը և հզօր ազդեցութիւն գործ դնել չարիքն հեռացնելու համար։ Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՐ ԲԱՐՈՎ ԱՑԴՊԷՍ

Ո՞ւր ես թողել հողդ ու ջուրդ, հանդդ ու արտդ, բաղչադ ու այգիդ և պանդուխտի մախաղը մէջքիդ կապած, գաւազանը ձեռքիդ՝ վազում, հայ գիւղացի...

Մթէթէ դու կարծում ես, թէ հեռուն, այնտեղ, սարերի ու ծովերի ետևում մեծ-մեծ քաղաքների ու գործարանների մէջ ոսկին ու արծաթը փռված են և դու գնալով այնտեղը՝ [illegible] դառնալով քո գիւղը՝ պիտի ազատվես չարչէի վաշխառուի ճիրաններից, որը թալվելով քո մարմնի մէջ, կամաց-կամաց ծծելով դառը քրտինքդ ու արիւնդ՝ փռվում է և քեզ ուժասպառ անում...

Մի գուցէ կարծում ես, թէ այնտեղ, հեռուն քո տանջանքդ աւելի պիտի գնահատվի, քան թէ տանդ ու դռանդ առաջ։

Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ։

Դու գնալով հեռուն քո ծննդավայրից և ընկնելով քաղաքների փաբթամ ու ժխորով լի փողոցները՝ նախ պիտի ամիսներով պարապ-սարապ ման գաս, որպէսզի կարողանաս քեզ համապատասխան մի գործ գտնել, այն էլ եթէ մի քիչ շուտ ժպտայ բաղդը։ Իսկ եթէ սև բաղդը իր երեսը երկար ժամանակ դարձնէ քեզանից, երևակայիր քո ծանր ու անելանելի դրութիւնը։ Գրպանումդ փող չէ լինելու, որ կարողանաս էլի մի քիչ սպասել, որ գուցէ մէկին խնդրելով, միւսի միջնորդի վարձ տալով՝ եթէ ոչ լաւ, գէթ մի չչչին վարձով կարողանաս տեղ գտնել։ Իսկ վերադառնալ կրկին ծննդավայր՝ դա թէ ծասք է քեզ համար և թէ գրպատ դատարկ։

Արշալոյսի վառ յոյսերով, առողջ մարմնով ճանապարհ ես ընկնում, սակայն պիտի վերադառնաս յոյսի վերջին նշոյլդ չախչախված, առողջութիւնդ մաշած ու երեսիդ ալ վարդն ու քաղցր ժպիտը մարած ու խամրած...

Հայրական տուն ու տեղդ թողած՝ ուր ես վազում վառ յոյսերի խելագար թափով դէպի մեծ-մեծ քաղաքներն ու նրանց աղմկալի գործարանները։

Ա՛նտեղ դու ոչ տան, ոչ գործարանի ու խանութի տէր ես, այլ դրսից գնացած սեփականազուրկ մի գաղթական, որ անտուն ու անտեղ թափառում ու հեղիս հազ, թոյլ ոտքերդ քարը տալով, հանում ես մի տան անկիւնի, որտեղ ընկնելով՝ ցաւից բռնված գլուխդ պիտի աշխատես հանգըստացնել...

Իսկ քո ծննդավայրում՝ դու տուն ու տեղի, հողի ու այգու տէր ես։

Միով բանիւ՝ քաղաքներում անտուն ու անտէր մի չնչին արարած ես, որի վրա նայել անգամ չեն ուզենայ, իսկ քո գիւղումդ, չը նայած աղքատիկ ցնցոտիներիդ, քո հասարակութեան պատուաւոր անդամն ես ու թագաւորը քո գերդատանի։

Ո՞ւր ես գնում թողած քո հարազատ մայր-հողդ, որի ծոցիցն են բղխում անուշահամ, կաթնանման սառնորակ աղբիւրները և որը ունի իր կրծքում անբաւ գանձ...

Ո՞վ է զարդարում թագաւորների, իշխանների ու քաղաքացիների սեղանները իր հազար ու մի բարիքներով, եթէ ոչ քեզ պէս գիւղացին, որը կպած մայր-հողի կրծքից՝ իր ժրաջան աշխատանքով հերկում, մշակում, ջրում և քաղելով ու հնձելով՝ քաղաքների շուկաներում մէկին տան աշխատանքով վաճառում ու Աստուծուն փառք տալով, ուրախ-ուրախ վերադառնում է իր փոքրիկ թագաւորութեան գլուխը։

Մայր հողն է, որ վարձատրում է իր խելացի մշակին՝ մէկին 30—50, մինչդեռ այդ նոյն մշակին չի տայ գործարանատէրն ու վաճառականը այդքան։

Բայց մայր-հողից այդպիսի օգուտ ստանալու համար չը պիտի երես դարձնել նրանից, այլ որդիական սիրով և ժրաջանութեամբ պիտի պինդ կպչել նրա մայրական կրծքից և սեփական տանջանքի քրտինքով ողողել այդ նոյն հողը...

Մի՛ հեռանայ մայր-հողից և մի սառչիր դու նրանից, հայ շինական։ Նա մայր է գթառատ, և անապառ բարիքով լի են նրա կուրծքն ու ծոցը։ Մօտեցի՛ր նրան ու լուսաւոր դարիս կատարելագործված մեքենաներով մշակիր նրան և պարարտացրու զանազան հիւթերով, և նա լիուլի կը վարձատրի քո 3—4 ամսվայ աշխատանքդ, 3—4 անգամ աւելիով՝ քան դու պիտի ձեռք բերես տաբրուբերով [illegible] ամիսների ընթացքում, մաշելով քո կեանքդ և ծախսելով քո ազատութիւնդ զանազան խանութպանների և գործարանատէրերի...

Ծոյլերի ու թոյլերի դարն անցած է։ այժմ լուսաւոր դարի պատմական մեծ անիւն է ուժեղ թափով պտտում, հիրը գլորվելով տեղի է տալիս նորին։ Եւ այս պիտի մի պատմական շրջանում պիտի պինդ կպչել մայր-հողից։ Նա է, որ ամբողջ տիեզերքի վրա հոլովվող մարդկութեանը կեանք ու երջանկութիւն է տալիս։ Բացի մայր-հողից ու ջրից՝ չը կայ մէկը, որ առատ կուրծք և լայն սիրտ ունենայ, որ կարողանայ լիուլի բաւականութիւն տալ նրա որդոցը...

Աւաւք դարերում գործադրված հին զէնքերը ժանգոտված են արդէն և անպէտք։ այժմ պիտի հին ու ժանգոտված հասկացողութիւնները դէն շպրտել ու լուսաւոր գաղափարներով, կատարելագործված մեքենաներով դուրս գալ մայր-հողի կուրծքը մշակելու և միայն նրա կրծքի վրա փնտռել քաղցրութիւնն ու երջանիկ, ազատ կեանքը։ Եւ ով որ թուլանայ ու ծուլանայ, նա ոճրագործութիւն՝ վերջին պատուհի, կեանքի քաղցը մնացորդը դէմ...

«Այստեղ ահա նման մտապատկերները նման յիշողութիւններ յարուցին։ Ուսուցչին պատկերացաւ վերաւոր, թունաւոր անցեալը՝ ուսումնարանը խված, սանիկները յափշտակված։ Անցեալ զրկանքների այրող շանթերը նորից բռնկվանվեցին սրա մէջ, և հոգեմաշ մռմունները կրկնապատկվեցին, եռապատկվեցին։ Նախկին հասարակական ազդուկներին՝ աղա հոգաբարձուին և փաշա առաջնորդին աւելացաւ նաև մի նոր ազդուկ, մի նոր պատուհաս, մի նոր գրգռիչ ոյժ, դայրացութեան առարկայ, և այդ՝ ջրաբաշխ Օվակիմն է։

«Շատ հասկանալի է, ուսուցչի մի անգամ քայքայված հոգեկան աշխարհը աւելի մեծ թափերով յուզվեց, դրա ստէպ գրգռված, հիւանդութեան հասած նեարդերը աւելի լարվեցին, ինքը աւելի անհամբեր դարձաւ։ Անցեալ վիրաւորանքների ու զրկանքների բազմաթիւ առուները միախառնվելով ներկայի հետ՝ մի վարար գետ կազմեցին, որը տարերային կատաղութեամբ ամեն ինչ սրբեց, տարաւ։ Ահա ուսուցչի հոգու պատկերը այն բոպէին, երբ կատարվեց ստիպված գործողութիւնը...

«Պ. պ. դատաւորներ, դրա վրա աւելացրէք և Օվակիմի անտեղի կատակաբանութիւնը ու արհամարհական ծաղրանքը հասարակական տեղում, հասարակութեան առաջ զայրուն ուսուցչի հասցէին։ Եւ ինչ չնչին ալիքների անդիրընկալ յորձանքներում։ Դա լքված է։ Անտուն։ Անտաց։ Մոռացված։ Աղուէսները իրանց տաքուկ, ապահով որջերն ունեն, իսկ բազմաշխատողին, լուսաւորութեան ջահակիրը տեղ չունի իր վաստակած գլուխը դնելու։

«Եւ ա՛հ յանկարծ մի անպասելի հոգեփոխութիւն է կատարվում։ ուսուցիչը՝ այգեպան։ Ուսումնարանը՝ այգի։ Մանուկները՝ անուշաբոյր ծաղիկներ։ Եւ ուսուցիչը մխիթարված է։ Անչափ գոհ։ Դա նորից կոչ է արել իր կենսական բոլոր ոյժերի պաշարը և իր վերջին վերապրումն է տալիս։ Այս անգամ բնութեան գոգումն է դա։ Անկախ, ազատ, անմահական ծաղիկների շրջանում, հեռու դաւող, քինախնդիր մարդկանցից։ Սակայն չար դեր այս նոր դրախտի պատնէշներին էլ նեռ թռաւ։ Ուսուցչի առաջ այժմ կանգնած է մի նոր թունաւոր օձ, մի նոր աւերածոյ ոյժ։ Դա ջրաբաշխն է, սարափանցի Օվակիմը։ Մի քառակուսի տգիտութիւն, մաղող ցեց, անլուր պատուհաս։ Եւ գոռոզ, արհամարհական ժպիտը երեսին, կանգնել է նրա ճանապարհին։ Չրից զրկում է դրա փայփայած կանաչների յուսատու հասարակութիւնը։ Ասել է թէ՝ գիտակցաբար աւերանքի է մատնում դրա անգնահատելին, անզուգականը, կեանքի ամբողջ էութիւնը, միակ սրբազան ուօթը՝ այգին։ Օրը ցերեկով չը տեսնված մի սոսկալի յափշտակութիւն, ծանրակշիռ կոպիտ կատակ, ինչ ատորութիւն՝ ուսուցչին անուանել քաղցած վարժապետ, օձ պարածող։

«Եթէ ուսուցիչը սոված է, այդ անարգանքը նրան չէ վերաբերվում, այլ մեզ բոլորիս, ինձ, ձեզ, պ. պ. դատաւորներ, և ամբողջ հասարակութեանը։ Սոված՝ նը և, ընդհակառակը՝ կուշտ տզրուկներ առաջ բերողը մենք ենք, մենք։ Մեր հասարակական արդանդն է դրանց դուրս վիժողը։ Եթէ այստեղ մի յանցանք կայ, յանցագործը իմ պաշտպանեալը չէ, այլ ամենքս։ Սակայն, պ. պ. դատաւորներ, մեզանից շատերը սոված են անպատիւ ապրել, թուք ու մուր տանել, վարժապետի ավնիւ սիրտը, հպարտ, պատուէր, բիւրեղ հոգին անկարող եղաւ տանել սարափանցի Օվակիմի հացրած ծանր վիրաւորանքը։ Ահա այստեղ կտրվեց չափազանց ձգված զայրոյթի լարը։ Կատարվեց անպասելին։ Մթնեց ուսուցչի գիտակցութիւնը։ Դա կորցրեց իր հաւասարակշռութիւնը։ Զայրացած հոգին բողոքեց իր ամբողջ թափով և չարին հատուցումն արեց... Դա զարկեց...

«Պ. պ. Դատաւորներ, ինձ մի բան է զարմացնում։ Այստեղ արդարադատութեան ներկայացուցիչը իր մեղադրական ճառի մէջ պաշտպանեալս վերաբերեալ թոյլ տուեց ասելու։ «Դա որպէս ուսուցիչ և կրթված անձն՝ իր կրքերը պիտի զսպէր և զուսներիկ, կոպիտ միջոցների չը պիտի դիմէր»։

«Ասացէք խնդրեմ, ինչ կը լինի, եթէ փորձանքը կանգնած է ինքը՝ անպայման մաքուրը, անկաշառը, շիտակ ազնուութիւնը, պատուի գիտակցութիւնը, մինչև հիւանդութեան հասնող ինքնամոռ պատուազգացութիւնը։

«Եւ ահա այդ պաշտելի էակը, այդ աղխատանքի առաքեալը, այդ անձնուէր հոգին գնահատված է...

«Ի՞նչպէս։ Ի՞նչ չափով։ Ի՞նչ էք կարծում, պարոնայք դատաւորներ։

«Դա դուրս է վռնտված մանուկների բուրաստանից։ Իր երանութեան դրախտից։ Իր դառն քրտինքով ողողված, ցօղված արհեստանոցից։ Իր մեկ մխիթարիչ անկիւնից։ Դրա ծրագիրների թերթերը անսիրտ պատուտրված են։ Դրա տարիների ընթացքում փայփայած գաղափարները ազատ ոտների տակ տրորված են։ Անմաքուր ձեռները ներս են խուժել ուսուցչի զգայուն կուրծքը և այնտեղից դուրս են պոկել ջերմ սիրտը... և այդ թանգագին անօթը շպրտված է... Ընկած՝ յատակի վրա, անարգանքի ու անպատուութեան մատնված...

«Պ. պ. դատաւորներ, այստեղ կանգ եմ առնում և ձեր ուշադրութիւնը դարձնում եմ մի այլ երևոյթի վրա. դա՝ ուսուցիչ Երկանեանի կեանքի երկրորդ մասն է. նրա գոյութեան վերջալոյսը։

«Ձեր առաջ կատարված ցուցումներից պարզվեց, որ դա դուրս է վռնտված անտեղի։ Դրա ծրագիրները փշրված են։ Մենաւորի ցուլը ձեռին, որպէս որբ խեցի, նանպատակ տարուբերվում է կեանքի ջախջախիչ ալիքների անդիրընկալ յորձանքներում։ Դա լքված է։ Անտուն։ Անտաց։ Մոռացված։ Աղուէսները իրանց տաքուկ, ապահով որջերն ունեն, իսկ բազմաշխատողին, լուսաւորութեան ջահակիրը տեղ չունի իր վաստակած գլուխը դնելու։

«Եւ ա՛հ յանկարծ մի անպասելի հոգեփոխութիւն է կատարվում։ ուսուցիչը՝ այգեպան։ Ուսումնարանը՝ այգի։ Մանուկները՝ անուշաբոյր ծաղիկներ։ Եւ ուսուցիչը մխիթարված է։ Անչափ գոհ։ Դա նորից կոչ է արել իր կենսական բոլոր ոյժերի պաշարը և իր վերջին վերապրումն է տալիս։ Այս անգամ բնութեան գոգումն է դա։ Անկախ, ազատ, անմահական ծաղիկների, թարմ, ստուերախիտ կանաչների շրջանում, հեռու դաւող, քինախնդիր մարդկանցից։ Սակայն չար դեր այս նոր դրախտի պատնէշներին էլ նեռ թռաւ։ Ուսուցչի առաջ այժմ կանգնած է մի նոր թունաւոր օձ, մի նոր աւերածոյ ոյժ։ Դա ջրաբաշխն է, սարափանցի Օվակիմը։ Մի քառակուսի տգիտութիւն, մաղող ցեց, անլուր պատուհաս։ Եւ գոռոզ, արհամարհական ժպիտը երեսին, կանգնել է նրա ճանապարհին։ Չրից զրկում է դրա փայփայած կանաչների յուսատու հասարակութիւնը։ Ասել է թէ՝ գիտակցաբար աւերանքի է մատնում դրա անգնահատելին, անզուգականը, կեանքի ամբողջ էութիւնը, միակ սրբազան ուօթը՝ այգին։ Օրը ցերեկով չը տեսնված մի սոսկալի յափշտակութիւն, ծանրակշիռ կոպիտ կատակ, ինչ ատորութիւն՝ ուսուցչին անուանել քաղցած վարժապետ, օձ պարածող։

«Եթէ ուսուցիչը սոված է, այդ անարգանքը նրան չէ վերաբերվում, այլ մեզ բոլորիս, ինձ, ձեզ, պ. պ. դատաւորներ, և ամբողջ հասարակութեանը։ Սոված՝ նը և, ընդհակառակը՝ կուշտ տզրուկներ առաջ բերողը մենք ենք, մենք։ Մեր հասարակական արդանդն է դրանց դուրս վիժողը։ Եթէ այստեղ մի յանցանք կայ, յանցագործը իմ պաշտպանեալը չէ, այլ ամենքս։ Սակայն, պ. պ. դատաւորներ, մեզանից շատերը սոված են անպատիւ ապրել, թուք ու մուր տանել, վարժապետի ավնիւ սիրտը, հպարտ, պատուէր, բիւրեղ հոգին անկարող եղաւ տանել սարափանցի Օվակիմի հացրած ծանր վիրաւորանքը։ Ահա այստեղ կտրվեց չափազանց ձգված զգայուն

Այդպէս՝ կարելի է թւել անվերջ օրինակներ։ Ես երբէք չեմ կասկածում, որ այդ օտար կապիտալիստները ոչ թէ գրաւում են Սարուխանով-Կուրինսկի ընկերութիւնից իրանց դրամագլխի համար տարեկան 5 կամ 6 տոկոս ստանալու յոյսով, և ոչ էլ իրանց հօր հոգու քաւութեան համար են գործում, այլ նրանց գրաւողը ածիսատածն է, և աւելի քան համոզված եմ, որ նրանք այդ գործի մէջ մտնում են միայն այն նպատակով, որ այդ ընկերութեան 50 բուբլանոց ակցիաները ապագայում մեզ վրա 250 բուբլով ստացնեն։

Թողնենք հայ կապիտալիստներին, որոնք այդ գործին չեն մօտենում, որովհետև այդտեղ պատուի և նրա հետ կապված նախանձի հարց կայ։ Թողնենք և փոքր դրամատէր վաճառականներին, որոնք հաւատալ իրանց կամքին չեն կարող մօտենալ, որովհետև նրանց դրամագլուխը միշտ պիտի շարժման մէջ լինի, որ բերած վաստակը իրանց ապրեցնի, իսկ այդ ակցիաների արժէքը մինչև երկաթուղու շահագործութիւնը սկսվելը, հաւանական է, շատ չի բարձրանայ և կամ որևէ աչքի ընկնող շահ չի բերի։

Բայց այն մարդիկ, որոնք առհասարակ չունեն և դառն քրտինքով ու անձը զրկելով, հաւաքած խնայողութիւնները զանազան խարեբաների ձեռքը ձգելով, ախ ու վայով են մտաբերում նրա յիշատակը և կամ ստիպված պահ են տալիս շատ փոքր տոկոսով զանազան հիմնարկութիւնների, նրանք կարող են և մեծ ցանկութիւն ունեն մասնակցելու այդ գործի մէջ, գնել ակցիաներ ոչ սպեկուլյացիաների համար, այլ իրանց համար ժամանակով փոքրիկ եկամտի աղբիւր ստեղծելու մտքով։

Արդ՝ միացնելով ձայնս «Մշակի» № 124-ի յօդուածագրին, առաջարկում եմ Սարուխանով-Կուրինսկի ընկերութեան զեկավարներին չը մերժել ակցիա խնդրողներին և վաճառել ժողովրդի մէջ այն չափով, ինչ չափով որ պահանջ կը լինի, իսկ մնացեալը թող կալզարդին իրանց հայեցողութեամբ։

Թող հաւատացած լինեն, որ միակ ճանապարհը՝ գրաւել ժողովրդի բարեկամական զգացմունքները դէպի այդ հիմնարկութիւնը՝ հէնց այս առաջարկածս է։ Տ. Հ.

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱԻԹԱՇԽԱՐՀԻՑ

VII

Ժողովրդական Թատրոն

Ամարային սեզոնը իր հետ բերեց Բագուի համար մի շարք թատրոնական նորութիւններ որ մարդիկ կամենում էին պատուաստել մեր քաղաքի ամարային ամիսներում թմրած հասարակութեանը։

Մի քանի գործողութիւններից բաղկացած դրամաները, օպերան ու օպերետան ամարային ամիսներում հասարակութիւն չէին կարող դրաւել դէպի թատրոն և ստիպել նրան ճնշված օդում, շոգի և տօթի մէջ նստել ու նայել։

Եւ ահա մարդիկ նոր միջոցներ են մտածում հասարակութեանը թատրոն դրաւելու համար։

Մայրաքաղաքներում վերջին տարիներս ամարային ամիսների ընթացքում մեծ աջողութիւններ էին ունենում այսպէս անուանվող «մինիատիւրների» թատրոնները, որոնք միաժամանակ իրանցից ներկայացնում էին և օպերա, և օպերետա, և դրամա, և սինեմատոգրաֆ և այլն։ Մի խօսքով՝ ամեն բան, ինչ որ կարող էր գրաւել հասարակութեան լայն խաւերը և քաշել դէպի թատրոն։

Եւ հասարակութիւնն էլ միշտ գոհ էր մնում այդ մինիատիւր, խայտաբղետ ներկայացումներից, ուր կալէյդոսկոպի պէս նրա աչքերի առաջ պատկերանում էր ամեն ինչ։

Ահա այդ յոյսերովն էլ, ամարային ամիսների ընթացքում, Թաղիեվի զարմանալի թատրոնում հիմնվում է «Փալաս» մինիատիւրների թատրոնը։

Իբրև նորութիւն՝ նա սկզբից ևեթ դրաւում է հասարակութեան ուշադրութիւնը և հանդիսականների այնպիսի բազմութիւն է գրաւում, որին միայն նախանձել կարելի է։

Սակայն նրա յաջողությունը աւելի շուտ բարձր և միջին դասակարգի հասարակութիւնն էր լինում, իսկ աւելի ստորին դասակարգը, բուն ժողովուրդը մի տեսակ քաշվում էր այդ նորութիւնից։

Եւ ահա, «Փալասի» աջողութիւններից գրաւված, բացվում է մինիատիւրների երկրորդ թատրոնը եղբ. Նիկիֆորների թատրոն-ցիրկում՝ «Ապոլլո» անունով։

«Փալասի» հետ մրցելու համար «Ապոլլոն» անուանում է իրան «Ժողովրդական թատրոն» և գնները նշանակում ամենամինիմում։

Սակայն մրցումը միայն դրա մէջ է կայանում, իսկ «Ժողովրդական» անունը արդարացնում է միայն էժան գները, ուրիշ ոչինչ։

«Ժողովրդական» անուան տակ գործող թատրոնը դուրս եկաւ, որ իսկապէս ժողովրդական էր, բայց ոչ թէ ժողովրդական թատրոն, այլ ժողովրդական կաֆէ-շանտան։

Հարիւրաւոր անգամներ, այո ու այն սինեմատոգրաֆիական նկարների հետ միասին, թատրոնի վարչութիւնը հասարակութեանը այնպիսի նօմերներ է հրամցնում, որոնց տեղը միայն կաֆէ-շանտաններումն է, կաֆէ-շանտանների երգչուհիներ իրանց խայտառակ պարերով, որոնց ժամանակ մերկ ոտները մինչև առաստաղ էին բարձրացնում, հռչակաւոր կուպլետիստ Արզանովը օրվայ չարիքների վրա արտասանած իր կուպլետներով և տիրահռչակ, խայտառակ «Блоха» ոտանաւորով, որի արտասանելու ժամանակ թատրոնում եղած կանայք ստիպված են լինում ականջները ծածկել և վերջապէս «կազինո» կաֆէ-շանտանից ուղիղ «Ժողովրդական թատրոնի» բեմը թռած կրէօլական դուէտը։

Եւ այդ բոլորը ժողովրդի համար։

Ահա ինչով է ուզում մրցել «Ապոլլոյի» վարչութիւնը «Փալասի» հետ։

Ճիշդ է, «Փալասումն» էլ կան կաֆէ-շանտանային երգչուհիներ ու կուպլետիստներ, բայց այնտեղի բեմի վրա չեն կատարվում այն խայտառակութիւնները, ինչ որ «Ապոլլոյում»։

Բարեբաղդաբար ժողովուրդը շատ շուտ ճանաչեց այդ «ժողովրդական թատրոնի» իսկական գոյնը և այժմ այնտեղ ներկայացումները տրվում են համարեա թէ դատարկ թատրոնում, և, ինչպէս ասում են, վարչութիւնը գլուխը կորցրած՝ չը գիտէ թէ ինչ միջոց ձեռք առնէ հասարակութիւնը թատրոն դրաւելու համար։

Վ. Թումանեան

Բագու

ԿԱՐՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Անցնում են տարիներ մեր մայր հօրիզոնի վրայով, և սակայն հայ կեանքում տիրող տգեղ երևոյթները դեռ չեն փարատվում։ Նրանք հրապարակ են նետվում իրանց ամբողջ այլանդակութեամբ։

Ցուզված է Կարսի հասարակութեան դիտակից տարրը։

Տեղի է ունեցել դպրոցական կեանքում իր նմանը չունեցող մի դէպք։

Մխական ժողովի անվստահութեան քուէին արժանացած հոգաբարձուներ մտել են հոգաբարձական կազմի մէջ ապօրինաբար։

Երեք տարի առաջ ծխական ժողովը ընտրում է հոգաբարձական կազմ 5 հոգուց, սակայն շուտով (նոյեմբերին) ստիպված է լինում ընտրել 2 հոգի ևս, հրաժարվածների (2 հ.) փոխարէն ներկայ տարվայ յունիսին։ Մօտենում է հոգաբարձութեան պաշտօնավարութեան լրանալու ժամանակը։

Հոգաբարձութիւնը ցանկանալով իրագործել դպրոցում իր որոշ միտումները՝ նախօրօք մի գրութեամբ դիմում է Երևանի փոխ-թեմակալին, խնդրելով հոգաբարձութեան 2-ի պաշտօնավարութիւնը երկարացնել մինչև նոյեմբեր, պատճառաբանելով որ յիշեալ երկուսը նոյեմբերին են ընտրված։

Փոխ-թեմակալ Մուրադբէգեան եպիսկոպոսը ընդառաջ է գնում հոգաբարձութեան։

Սակայն «Ուրբաթը աւելի շուտ եկաւ, քան շաբաթը»։

Ցունիսին կայացած ծխական ժողովը դանում է, որ յիշեալ 2 հոգաբարձուների լիազորութիւնը վերջացած պիտի համարել, քանի որ նրանք ընտրված են հրաժարված 2 հոգաբարձուի տեղ՝ հոգաբարձական կազմը լրացնելու համար։

Կայանում է նոր ընտրութիւն։ Դրվում է յիշեալ հոգաբարձուների թեկնածութիւնը, սակայն... տապալվում է ծխական ժողովի կողմից։

Մխական ժողովը ընտրում է բոլորովին նոր անձնաւորութիւններ և դիմում է փոխթեմակալին՝ հաստատելու։

Այս բոլորից յետոյ չընտրված երկու հին հոգաբարձուները չեն հեռանում իրանց չը վստահացված ապարիզից։

Եւ դրա հետևանքը լինում է այն, որ այսօր հոգաբարձութեան կազմում 5-ի փոխարէն բաղկած են 7 հոգի։ Դրանց թուումն են չը վերընտրված 2 հին հոգաբարձուներ։

Հին հոգաբարձութեան ամբողջ ջանքն է՝ պատժված տեսնել ուսուցիչներին և վերընտրել տալ պատ-ուսուցչին։

Տարվայ ընթացքում ուսուցիչներից մէկը համարձակութիւն է ունենում նկատելու, որ առաջ-ուսուցիչը թերանում է իր պարտականութիւնների մէջ։

Աւագ-ուսուցիչը, զայրացած այդ բանի դէմ, ժամանակաւորապէս հեռացնել է տալիս ուսուցչին և զեկուցանում այդ մասին ուսուցչական խմբին։

Խումբն այդպիսի որոշումից յուզվում է և առաջարկում նոյն օրն ևեթ խառն ժողով դումարել։

Սակայն հոգաբարձութիւնը փախուստ է տալիս։

Բայց ուսուցչուհիները շարունակում են իրանց համերաշխ ընթացքը պաշտօնակիցների հետ։

Հոգաբարձութիւնը շտապով աւագ-ուսուցիչ Գիւլնազարեանին ուղարկում է Երևան փոխ-թեմակալի մօտ։

Ուսուցչութիւնն էլ մի հեռագրով խնդրում է փոխ-թեմակալից անյապաղ քննութիւն նշանակել։

«Արդարադատ» փոխ-թեմակալը, լսելով միայն մի կողմին, պաշտօնական գրութեամբ յանդիմանութիւն է կարդում միւս կողմին։

Խումբը վշտանում է այդպիսի մի անարդար վերաբերմունքից և մի գրութեամբ կրկին խնդրում է մինչև ուսումն. տարվայ վերջը քննութիւն նշանակել։

Սակայն թաքնում են ամիսները և փոխ-թեմական ու թեմ. տեսուչը չեն մտածում անգամ քննութեան մասին։

Վերջանում է ուսումն. տարին։ Ցրվում են ուսուցիչները և...

Եւ մի գեղեցիկ օր, յունիսի 23-ին, յայտնվում է թեմական տեսուչը և կանչում է մնացած 2—3 ուսուցիչներին «քննութիւն կատարելու»։

Այսօր ամբողջ ուսուցչական կազմը արձակված է պաշտօնից։

Եւ այս առաջին երևոյթը չէ Կարսի ծխ. դպրոցում։

Ամեն տարի հոգաբարձուների միևնոյն քմահաճոյքը։

Եւ դեռ պիտի հաւատանք, որ նրանք անկեղծօրէն պաշտպանում են դպրոցի և ուսուցիչների շահերը։

Սակայն նրանց անբարեխղճութիւնը հայ ուսուցչի համար ամենավատթարագոյն հարուածն է։ Գահ

Կարս, 8 օգոստոսի

ԳՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՂԲԱՏՈՒՄ

Գարունը սկսվելուն պէս խեղճ հաղբատեցիք ցաւի ու կրակի մէջ են ընկնում, որովհետև գողութիւնների ճանապարհները բացվում են և մի երկու տականքապետ գողերի մտադրութիւնները գլուխ բերելու միջոցները հեշտանում։ Թշուառ հաղբատեցիները այդ անիրաւների երեսից օր չեն տեսնում, որոնք ամեն ձեռք ընկած ապրանք տափանում են և մինչև անգամ տանելը էլ կարում, մէջի կայք ու կայանքը սրբում-տանում։ Եւ զարմանալին այն է, որ գիւղացիները շատ լաւ գիտեն, թէ իրանց տականք-գողերը ովքեր են, բայց և այնպէս կտրուկ միջոցների չեն դիմում, որ դրանց տակդհան անեն։ Թէև երբեմն գիւղացիները իրանց բռնած տեղացի գողերի ձեռքն են տալիս նրանց «զաուրմա» արած ոչխարների և խոզերի գլուխները, կամ հանգցրած մեղրաճանճների փեթակները և գիւղի վերևի ծայրից մինչև ներքևի ծայրը ման են ածում և ասել տալիս, թէ՝ «մենց ենք գողացել», բայց ամեն բան էլ դրանով է վերջանում, որովհետև «անաբուռները» դրանից յետոյ աւելի քաջութեամբ են շարունակում իրանց զզուելի արհեստը։

Երբեմն պատահել է, որ բռնած գողերի համար ամբողջ գիւղը համախօսական է կազմել և պրիստաւին ուղարկել, բայց դեռ գողը իր պատիժը չը ստացած՝ կիսաճամբայ առաջ-փառաջ յետ է դարձել այն երկրորդ «Թղթի» հիման վրա, որը կազմել են տուել կեղծ ճանապարհով այդ գողերի մի երկու պաշտպանները, վախեցնելով այն մարդկանց, որոնք տուժել են իրանց երեսից։ Ա՜խ, Երբ պիտի չնչվեն մեր այդ տեսակ տականքները և նրանց դաս տուող «Թռնդրախառնի» տականքապետները, որոնք գիշեր-ցերեկ, հեռուից թէ մօտիկից, դասեր են տալիս, իրանց «մտանների շարժելովն» նրանց շահատակութիւններ անել տալիս և լաւ ճանապարհից վատը տանում։ կը գայ արդեօք այն ժամանակը, որ հաղբատեցիք, նրանցից ազատված, ազատ շունչ քաշեն և ոչ թէ դրանց երեսից, գողութիւնից ազատվելու համար, իրանց ապրանքների կշտին օր ու գիշեր կուչ դան և պահպանեն։ Սրանից մի քանի տարի առաջ՝ գիւղը այնքան ապահով էր, որ ապրանքները «բրախած էին» պահում, որովհետև «մի չչի» գողեր չը կային, իսկ դրսի թուրք գողերն էլ հաղբատեցիներից վախենում էին և չէին համարձակվում ոտքը Հաղբատի սահմանը կոխել, մանաւանդ որ համարձակվողները միշտ գնդակախորով էին լինում։ Անցան այդ օրերը։ այժմ գողերը ապրանքը կարով են հանում և մարսում։ և կը մարսեն էլ, որովհետև մեր գիւղացիք վախկոտութիւնից է թէ ուրիշ բանից՝ իրանց տունը իրանց ձեռքով են քանդում և շատ ընտանիքների թշուառութեան պատճառ դառնում։

Այս տարի, ապրիլի վերջերին, տանու գողերը, գիշերով, հարևանների դռները դրսից կողպելով, մտան Պերոզեանց Դանիէլի տուն և բաւականաչափ զորգեր ու արծաթեղէններ տարան։ գողերը մինչև այժմս դեռ չեն գտնված։ Ցուլիսի վերջերին էլ Աբամայիս Երզնկեանցի 8 հատ մեղրաճանճերի մեծ փեթակները գողերը գիշերով հանգցրին և մեղրը գողացան։ Գիւղացիք, գողութիւնը բաց անելուն հետամուտ լինելով, գտան գողացողին, որը, ինչպէս ասում են, ուրիշ յանցանքների մէջ էլ է առ այժմ բերնէ-բերան մեղադրվում։ Այս վերջինիս համար գիւղացիք համաձայնական են կազմել և ատամուտերին տուել, որ սա էլ մարմնաւոր իշխանութեանը յանձնէ՝ պատժելու յանցաւորին։ Սա առ այժմ գիւղական ոստիկանութեան հսկողութեան տակ է գտնվում։

Այսօր էլ սարից եկողները յայտնեցին, որ բոլոր սարաւորները անժամանակ քոչել են ձորերը՝ իրանց ապրանքներով և դաշտերով, որովհետև աւազակներ են դուրս եկել, որոնք շատերի հրացանները խլել են և մի քանիսի ապրանքները քշել տարել են։

Իսկ թէ որքան են քշածները, այդ առ այժմ անհնարին եղաւ իմանալ։ Միայն հիշին այս է, որ սարատիը գիւղը պատել է։ Եթէ հաղբատեցիք չեն կամենում ոստիկանութեան դիմել, ապա, իրանց ապրանքները գողանալուց ազատելու համար, լաւ կը լինի, եթէ սարերի գլուխներին և ճանապարհների կիրճերում պահապաններ նշանակեն այնպիսի մարդկանց, որոնք ազնուութեամբ չեն կամենայ գողերի հետ մասն ու բաժին ունենալ։ Սլաք

ՎԱՐՇԱՎԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Վարշավա, 3 օգոստոսի

Ահա երեք տարի է, ինչ Վարշավայի հայկական գաղութի հոգածութեան առարկայ եղած է՝ հիմնել տեղս աղօթատուն, տարբերական դպրոց և գր. ընթերցարան։ Սակայն մինչև օրս այս խնդրի առիթով դրական ոչինչ քայլեր արված չեն։ Ճիշդ է, սկզբնեռում կայացաւ ծխ. ժողով, ընտրվեց հոգաբարձութիւն, որը մինչև իսկ հաստատվեց առաջնորդից, որոշվեց ծխ. տուրքի քանակութիւնը և այլն, բայց գրեթէ միայն այսքանի վրա կանգ առաւ սկսված գործը։ Հոգաբարձութեան անփոյթ վերաբերմունքը իր պաշտօնին մի կողմից և ծխականների ոգևորութեան թուլանալը միւս կողմից արգելք եղան վերոյիշեալ գեղեցիկ ծրագիրների իրագործմանը։ Բացի այս՝ նկատելի է և այն պարագան, որ գաղութի անդամների մէջ գրեթէ չը կան ծխական կանոններին և ընդհանրապէս ազգային կեանքին ծանօթ մարդիկ։ Մի՞ գիտենք, որ կենտրոնական հայաշատ քաղաքներում իսկ այդպիսի անձինք սակաւ են, ուր մնաց հեռաւոր ծայրագաւառներում գտնվելիս...։

Գալով գաղութի քանակին և որակին՝ ըստ պաշտօնական տեղեկութիւնների մօտ 200 հոգի են, որոնցից սակայն միայն 4—5 զուտ հայկական ընտանիք։ Մնացեալները՝ ոմանք օտարազգիների և օտարազգուհիների հետ ամուսնացած, ոմանք էլ տակաւին ամուրի։

Թէ ազգաբնակութեան քանակութեան և թէ առևտրա-արդիւնաբերական տեսակէտից՝ Վարշավան երրորդ տեղն է բռնում Պետերբուրգից և Մոսկվայից յետոյ։ Շնորհիւ բազմաթիւ զործարանների, արհեստանոցների, արտասահմանին մօտ գտնվելով հանդերձ՝ Վարշավան ամբողջ Ռուսաստանի համար գլխաւոր մատակարար քաղաքներից մէկն է հանդիսանում։ Ամառը ապրանք գընելու համար կայսրութեան ամեն կողմերից գալիս են տեղս վաճառականներ, որոնց մէջ հայերը վերջին տեղը չէ, որ բռնում են։

Տեղական ազգաբնակութեան կեանքը շատ հետաքրքրական և ուսանելի կողմեր ունի մանաւանդ մեզ՝ հայերիս համար։ Այստեղ առիթ է ներկայանում ի մօտոյ ծանօթանալու լեհացիների օրինակելի հասարակական համերաշխութեան, նրանց գերազանց կուլտուրային, որին անխուսափելիօրէն ենթարկվում է ամեն եկաւոր տարբ. նաև հրէաների զարմանալի միաբանութեան, նրանց եռանդին և ճարպիկութեան առևտրական ասպարէզում, որի միակ տիրապետողն են գրեթէ այստեղ։ Արժէր աւելի երկար կանգ առնել մանրամասնութիւնների վրա, բայց խնայում ենք լրագրական սուղ էջերը, ուստի ապագայում աւելի լրիւ կը ծանօթացնենք ընթերցողներին տեղական կեանքի հետաքրքրաշարժ երևոյթներին։

Տեղական լրագիրները հաղորդում են, որ մօտերս Համբուրգից եկել են Վարշավա 40 հայ գաղթականներ Երևանեան նահանգից, որոնք գայթակղելով գաղթականական գործակալների խոստումներից՝ ուղևորվել են Ամերիկա, բայց զոհ դառնալով այդ գործակալների խաբեբայութեան՝ այժմ իրանց վերջին կօպեկներից զրկված, չքաւոր, վերադառնում են հայրենիք։ Արդեօք մի օր վերջապէս պիտի խրատվեն...։ Մ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Կովկասի Փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկովը օգոստոսի 15-ին, կէսօրին, ժամանել է Պետերգօրսկ, ուր ընդունվել է մեծ հանդիսաւորութեամբ։ Տեղական քաղաքագլուխը և դումայի բոլոր ձայնաւորները ներկայացել են Պետերգօրսկ կայարանը՝ ի շարս բազմաթիւ պաշտօնական անձերի՝ դիմաւորելու Փոխարքային։ Փոխարքան Թիֆլիս կը ժամանէ օգոստոսի 19-ին։

✦ Այսօր, օգոստոսի 17-ին, երեկոյեան ժամը 7-ին Փոխարքայի դիւանատունը՝ սենատոր Է. Վատացիի նախագահութեամբ տեղի կունենայ մի խորհրդակցութիւն առաջիկայ բամբակագործների ցուցահանդէսին ներկայացնելու խնդիրները քննելու ու մշակելու նպատակով։ Խորհրդակցութեանը մասնակցելու հրաւիրված են Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան և Հայոց ու Վրաց Գիւղատնտեսական Ընկերութիւնների ներկայացուցիչները, նոյնպէս և երկրագործութեան ու կալուածների մասի բամբակագործութեան մասնագէտները։ Այդ նպատակով երէկ երեկոյեան Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնների ներկայացուցիչները նախապատրաստական նիստ ունեցան։

✦ Ինչպէս յայտնի է, առաջիկայ սեպտ. 25-ին Մոսկվայում տեղի է ունենալու ոչխարաբուծական ցուցահանդէս։ Կովկասի շրջանից արդէն հաւաքված են Դարաքիլիսայում 12 տեսակի ոչխարներ և 3 տեսակի այծեր, իւրաքանչիւր տեսակից 3—4 հատ, որոնք մի տաս օրից յետոյ կուղարկվեն Մոսկվա։ Այդ ցուցահանդէսում ի միջի այլոց ցուցադրված կը լինեն Կովկասից ուղարկված քիւրդ, նողայ և այլ խաշնարած ազգութիւնների տիպեր իրանց կարգ ու սարքով և բուրդ ու բրդեղէն գործուածքների զանազան նմուշներով։

✦ Օգոստոսի 15-ին, երեկոյեան ժամը 9½-ին, երկաթուղագծի միւս կողմում՝ Նախալովկայի և Նաղիբեանի հողերի միջև ահագին հրդեհ ծագեց։ Մինչև հրդեհաշէջների օգնութեան հասնելը հրդեհը արդէն բռնկել էր ամբողջ տունը դրացի շէնքերով։ Հրդեհը այնքան ուժեղ էր, որ քաղաքի զանազան մասերում խռնված հասարակութիւնը դիտում էր սաստկացող բոցերը, որոնք կարծես լիզելով ճարակում էին ամբողջ թաղը։ Բարեբաղդաբար հրդեհը ժամանակին հանգցրին։

✦ Օգոստոսի 15-ին, երեկոյեան ժամը 9-ին, Միքայէլեան փողոցից դէպի Պիրագովեան փողոցը թեքվելու կէտի մօտ՝ վերևից եկող էլեքտրաքարշի վագոնից ցած թռչելով մի երիտասարդ կամենում է դէպի կայարան գնացող № 35 վագոնը նստել, բայց ընկնում է վագոնի տակ։ Վաղման Աշչիկովը իսկոյն կանգնեցնում է վագոնը։ Երիտասարդը, շնորհիւ յիշեալ վագոնի փորձառութեան, ազատվում է վերահաս մահից՝ ստանալով ջարդուածքներ մարմնի զանազան մասերում՝ ոտներից, ձեռքերից։

✦ Քաղաքային առևտրա-տնտեսական գործակալները շարունակում են պայքարել հացավաճառների և մսավաճառների շահատակութիւնների դէմ։ Օր չէ անցնում, որ արձանագրութիւններ չը կազմվեն։ I քաղաքամասի գործակալ Մելիք-Թադէոսեանցը այդպիսիների վրա այս երկու օրերս կազմել է 11 արձանագրութիւն։ II-րդ քաղաքամասի գործակալ Աղաբէգ Մկրտումեանը՝ 6 արձանագրութիւն։ III-րդ մասի (4-րդ և 5-րդ քաղաքամասի) գործակալ Մ. Մինասեանը՝ 6 արձանագրութիւն, և այլն։ Հացավաճառներ կան, որոնց վրա կազմված են մի քանի արձանագրութիւններ։

✦ Օգոստոսի 15-ի առաւօտեան Գուշկինեան փողոցի վրա գտնվող «Կուլտուրա» Ընկերութեան գրասենեակից գողացել են 116 բուբլի։ Ցիշեալ գրասենեակի կառավարիչը կասկած է յայտնել գրասենեակի արտելշչիկ Իվան Տարասկինի վրա։

✦ Օգոստոսի 15-ին, Նորէյսկի վերելքի վրա, № 9 տանը, որ պատկանում է Սոլոմոն Միրօտաձէին, երեկոյեան ժամը 10-ին հրդեհ առաջացաւ։ Տունը արժէ 15,000 բուբլի, բայց ոչ մի տեղ ապահովագրված չէ։ Վնասը հասնում է 10,000 բուբլու։

✦ Օգոստոսի 14-ին և 15-ին կատարվել են քաղաքի զանազան մասերում մի շարք մանը գողութիւններ, գլխաւորապէս տան ծառայողների ձեռքով։

✦ Օգոստոսի 15-ին ոստիկանութիւնը քաղաքի զանազան մասերում կալանաւորել է 315 հոգի անցագիր չունեցողներ և վեց մուրացկաններ։

✦ Թիֆլիսի փողոցները ջրող կապալառուն շատ յաճախ օգտվում է նիհար և ուժասպառ ձիաների ծառայութիւնից, որի շնորհիւ ջրելու գործը կատարվում է դանդաղ ու անկանոն կերպով։ Քաղաքային ինքնավարութեան կօնտրոլը, հրաւիրելով քաղաքային վարչութեան ուշադրութիւնը այդ հանգամանքի վրա, խնդրում է առաջարկել յիշեալ կապալառուին, որպէս զի ճշդութեամբ կատարի պայմանագրի 4-րդ կէտը, որով պահանջվում է պահել ուժեղ, առողջ և աշխատանքի դիմացկուն ձիաներ։ Վարչութեան պահանջով կապալառուն արդէն փոխել է 8 ձիաներ։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

✦ *Դօքտոր Կլիսէնկո.*—Կուրսկ քաղաքում դր. Կլիսէնկոն, առանց խնդիր ներկայացնելու, արձակված է պաշտօնից՝ ստանալով վարձատրութիւն մի գիւղացի կնոջից 60 բուբլու փոխանակ՝ 160 ր., այլև մի ուրիշ հիւանդից ստանալով 500 ր.։

✦ *Կատաղում.*—Դմիտրովսկի գաւառում խոշոր եղջիւրաւոր անասունների շրջանում տեղ ունեցաւ կատաղում. կարճ ժամանակում կատաղեցին հինգ կենդանի։

✦ *Գիւղատնտեսական նոր ինստիտուտ.*—Երկրագործական գլխաւոր վարչութիւնը որոշել է հիմնել եկող տարվանից Սիբիրում գիւղատնտեսական ինստիտուտ։

✦ *Կանայք զիտութիւնների ճեմարանում.*—Հրատարակված է նոր օրէնք, որի հիման վրա գիտութիւնների կայսերական ճեմարանում կարող են տեղ բռնել տղամարդկանց հետ և կանայք, եթէ սրանք ուզեն միատեսակ ցեղ՝ տղամարդկանց օրինակով։ Արդէն յայտնի հինգ կանանց տրված է այդ իրաւունքը։

✦ *Խմբագիրը բանտարկված.*—Պետերբուրգի քաղաքապետը որոշել է բանտարկել «Правда» թերթի խմբագրին 3 ամսով՝ իր թերթի յուլիսի 11-ի համարում տեղադրելուն համար «Ծառայութիւնը Հիւսիս-Արևմտեան երկաթուղիներում» յօդուածը։

✦ *Ժուժկալութեան առաջին ռուս դպրոցը.*—Դպրոցական ալկոհոլիզմի դէմ կռուելու համար՝ Պետերբուրգի գաւառի Սերգիեվեան անապատի Պաւել անունով աբեղան խելացի կռիւ է մղում անժուժկալութեան դէմ։ Առանց երևի միջոցի հիմնած նրա ուսումնարանը այժմ ունի բաւական զրամագլուխ և ատիճանաբար առաջ է տանում իր սիրած գործը։ Ուսումնարանի գլխաւոր գործը՝ ժուժկալութիւն սովորեցնելն է։

Ազատ ժամանակ աշակերտները պարա-

պում են ֆիզիկական աշխատանքով, գիւղատնտեսական, կազմաքարական, հիւսնական ու կօշկարական գործով։ Օրիորդները սովորում են կարուձև։ Սերգեյեվան ուսումնարանը հզօր թափով կռիւ է մղում և հասակաւոր բնակչութեան դէմ։ Իբրև հետևանք այսպիսի գործունէութեան՝ հինգ տարվայ ընթացքում դրացի բնակչութիւնների միջև յանցագործութիւնը պակասել է 75%։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ԱՆՀԵՏԱՑՈՂ ԶԳԱՑԱՐԱՆԸ

(Գիտական զրոյց Գ. Ա.-լի)

Շատերին գուցէ օտարոտի թւայ, եթէ ասենք, որ մարդուս զգայարաններից մէկը ենթակայ է չքանալու։ Մինչդեռ դա անհերքելի ճշմարտութիւն է։ Մեր հոտառութիւնը բառիս ընդարձակ իմաստով մեռնող, հանգչող զգայարան է։ Մեր միւս բոլոր զգայարանները, եթէ կատարելագործվելիս էլ չը լինեն, գոնէ չեն փչանում, մինչդեռ հոտառութիւնը սերնդից սերունդ անցնելով շարունակ ընթանում է և վերջի վերջոյ ենթարկված է բոլորովին անհետանալու։

Պատճառը շատ բնական է։ Բիոլոգիայի հիմնական օրէնքի համաձայն, այն բոլորը՝ ինչ չէ գործադրվում օրգանիզմի կողմից՝ անհետանում է, ծիւրվում է ատրոֆիայի։

Եւ իրօք, ժամանակակից մարդու համար հոտառութեան զգայարանը գրեթէ զուրկ է օգտաւէտութիւնից։ Դա միակ եզակի զգայարանն է, որից եթէ մարդը զրկվի, ոչ մի առանձնակի զրկանքի չի ենթարկվի։ Երբ մենք բռնվում ենք հարբուխով, կարողանում ենք առանց նեղութեան հոտառութիւնից զուրկ մնալ։

Փաստ է, որ մենք այժմ չունենք այն հոտառութիւնը, որոնցով օժտված են եղել մեր նախահայրերը։ Միջնադարեան բժիշկները հիւանդներին հոտից էին ճանաչում, իսկ Պերուի բնիկները, ինչպէս վկայում է Հումբոլդը, կարողանում էին հետախուզել գաղանին հոտառութեամբ և այդ անում էին այնպէս աջող, ինչպէս մեր այժմեան շները։ Հաւանական է, որ դէպի մարդիկ ունեցած «նուրբ զգացմունքը» և սրա նման ուրիշ շատ արտայայտութիւնները մի ժամանակ ունէին ոչ թէ ձևական, այլ բէալ իմաստ։

Որ մեր հոտառութիւնը անհետանալու վրա է, կարող է իբրև ապացոյց ծառայել այն երևոյթը, որ մենք շատ շուտով յոգնածութիւն ենք զգում քթի սահմաններում։ Այդպէս, օրինակ, եթէ որոշ ժամանակ մենք մնանք մի սենեակում, ուր տիրում է որևէ հոտ, մենք շուտով դադարում ենք զգալ այդ հոտը։ Զը կայ որևէ հոտ—ախորժելի կամ անախորժ—որին վաղ թէ ուշ մեր հոտառութիւնը չընտելանայ մինչ այն աստիճան, որ բոլորովին չը զգանք այդ հոտը։ Ով սիրում է օծվել հոտաւէտ իւղերով, շատ անգամ չի էլ ըմբռնում հէնց իր վրայի ուժեղ բուրմունքը։ Նոյնը նկատվում է և աղբ թափող բանուորների մէջ, որոնք չեն զգում իրանց շրջապատող գրոյ հոտը։

Եւ այդ բոլորը տեղի ունի այն հանգամանքի շնորհիւ, որ յոգնում է հոտառութեան օրգանը, և այդ յոգնածութիւնը հասկանալի կը դառնայ, եթէ աչքի առաջ ունենանք զգայարանքի անօգտակարութիւնը։

Քանի որ օրգանիզմը ոչ մի օգուտ չէ քաղում յիշեալ զգացողութիւնից, նա թուլանում է և դադարում մեր ուշադրութեան գոհացում տալուց։ Նոյնը չէ կարելի, ի հարկէ, ասել շների վերաբերմամբ, որոնց հոտառութիւնը իր ընդունակութիւնը չէ կորցրել, ուստի և չէ կարելի համարել անհետացող։ Շունը հոտառութեամբ ժամերով կարող է հետախուզել գաղանին առանց ոչ մի յոգնածութիւն զգալու հոտառութեան սահմաններում։ Եւ դա բացատրվում է նրանով, որ նրա այդ զգացողութիւնը առնչութիւն ունի կեանքի շատ կարիքների հետ։

Կայ միայն հոտառութեան տպաւորութիւնների մի կարգ, որը մինչև այժմ պահպանել է իր սրութիւնը և որը հաւանօրէն չէ ենթարկված անհետ լինելու։ Դրանք այն տպաւորութիւններն են, որ մենք շատ անգամ շփոթում ենք ճաշակի և համի հետ։ Շատերին գուցէ օտարոտի թւայ, եթէ ասենք, որ մեր ճաշակի զգացողութեան աստիճանները շատ աղքատ են։ Դրանք քաղցրի, թթուի, դառնութեան, աղի կամ կծուի զգացողութիւններից հեռու չեն գնում։ Եւ ճաշակի այդ բոլոր տարբերը ըմբռնողականութիւնը պայմանաւորված է հոտառութեան զգայարանի մասնակցութեամբ. այդպէս՝ կերակրի հոտը մենք ըմբռնում ենք մեր քթի ետևի մասի անցքերի միջոցով և այդ երևոյթը շփոթում ենք ճաշակի զգացողութեան հետ և սխալմամբ վերագրում ենք ճաշակելուն։

Վերջինս՝ այսպէս ասած «ներքին» հոտառութիւնն է և դա է, որ մնացել է իր ամբողջ ոյժի մէջ, մինչդեռ արտաքին հոտառութիւնը անհետանում է և ծիւրվում ատրոֆիանաբար։

Մեր հոտառութեան սահմաններում կայ մի հետաքրքրական, առանձնայատուկ երևոյթ ևս, որը երևի իւրաքանչիւրը մեզանից նկատած կը լինի։ Դա այն է, որ մի որևէ հոտ առաջ է բերում մեր գիտակցութեան մէջ յիշողութիւններ, որոնք մինչև այդ կիսով չափ մոռացված էին։

Հեռաւոր անցեալի այն դէպքերն ու պատկերները, որոնք կապված են եղել մի որոշ հոտի հետ, երևան են գալիս անսպասելի կերպով, կարծես մի կախարդական ամբողջացած պարզութեամբ։ Այդպէս՝ շատ անգամ որևէ օճառի, հոտաւէտ ջրերի, նաւթալինի և այլ նիւթերի ազդեցութեան տակ մարդկային յիշողութեան մէջ վերակենդանանում են շատ հեռաւոր անցեալի, նոյն իսկ մանկութեան օրերի, մոռացված դէպքեր և պատկերներ։

Զարմանալի կերպով հոտառութեան այդ առանձնայատկութիւնը կապ ունի այդ զգայարանի անօգտակարութեան հետ։

Մեր ֆիզիքական բնութեան մէջ ամեն ինչ շատ կամ նուազ չափով ստեղծված է նպատակայարմար կերպով և իւրաքանչիւր անհասկանալի երևոյթին բնախօսը պիտի մտնենայ այս տեսակէտից։ Ինչով բացատրել վերոյիշեալ երևոյթը։ Մեր կեանքի մի ժամանակվայ յայտնի փաստը պատահաբար կապ է ունեցել մի որոշ հոտի հետ։ Անցնում են շատ տարիներ, և մենք նորից զգում ենք նոյն հոտը։ Եթէ յիշեալ հոտառութեան զգացողութիւնը օգտաւէտ լինէր մեզ համար, նա մեր յիշողութեան մէջ կը վերականգնեցնէր անցած դէպքի որևէ մանրամասնութիւնը և այդ դէպքում միայն այն դէպքը, որը մեզ օգտաւէտ է վերյիշել։ Այդպիսով են, որ մեր հոգեկան աշխարհում կուտակվում են փորձերը և կազմվում օգտակար բնազդներ։

Բայց հոտառութեան զգացողութիւնները, որոնք ընդհանուր առմամբ անօգտաւէտ են, ակնածութեամբ վերարտադրում են մեր առաջ անցած փաստը ամբողջական մանրամասնութեամբ, կարծէք այդ հարուստ պաշարից առաջարկելով մեզ ընտրել օգտակար ցուցմունքներ։

Այստեղ առաջ է գալիս մի հետաքրքրական հարց. չէր կարելի արդեօք հոտառութեան այդ առանձնայատկութիւնից օգուտ քաղել մեր փորձնական կեանքում։ Թէպետ այդ հնարաւորութիւնը չէ կարելի, չը նայելով մինչև այսօր այդ ուղղութեամբ ոչինչ չէ արված։ Միայն մի դէպք է յայտնի մարդու հոգեկան աշխարհի այդ կողմից։ Նուիրելով մի քանի խօսք ևս այդ դէպքի նկարագրութեան, մենք վերջ կը տանք և մեր համառօտ զրոյցին։

Յայտնի բնախօս Մաքս Ֆերվօրնը իր «Հոգեկան կեանքի մեքենաբանութիւն» գրքում պատմում է, որ մի ճանապարհորդի քնած ժամանակ քթին մօտեցրին հոտաւէտ իւղ, որը բերված էր Եգիպտոսից։ Ինչ ասել կուզէ, որ նրան առաջուց չէին յայտնած այդ փորձի մասին և ոչինչ։ Երբ նա վեր կացաւ, խնդրեցին, որ նա պատմէ իր երազում տեսածը։ Պարզվեց, որ երազը նրան վերափոխել էր Կահիրէ. նա թափառելիս է եղել Կահիրէի շուկայում և, վերջի վերջոյ, մտել է այն խանութը, որտեղից գնած են եղել վերոյիշեալ հոտաւէտ իւղը։ Ուրիշ խօսքով՝ այս դէպքում արհեստական կերպով յիշողութեան մէջ վերարտադրած էր անցեալի մի յայտնի պատկերը իր բոլոր մանրամասնութիւններով։

Այն զգացողութիւնը, որին վիճակված է անհետանալու, օժտված է հրաշալի ընդունակութեամբ՝ վերակենդանացնել մեր յիշողութեան մէջ հոգեկան այն տարրերը, որոնք արդէն մատնված էին անհետ կորստի։

(«Природа и Люди»)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 30 յուլիսի

«Մշակի» № 161-ում կարդացի Կոկանդից Պ. Մանուչարեանի թղթակցութիւնը, որով նա ասում է՝ «Տեղիս եկ.-ծխ. ուսումնարանի հոգաբարձութիւնը իր ընտրված օրից կատարել է մի շարք աչքի ընկնող գործեր, այն է՝ կառուցել է աղօթատան և ուսումնարանի համար շինութիւններ, գուլխ է բերել ուսումնարանի գործը՝ ծեռք բերելով բոլոր ուսումնարանական պարագաները, ունեցաւ 1911/12 ուսումն. տարում դպրոց, որի համար հրաւիրեց ուսուցիչ և ուսուցչուհի և տարվայ վերջը արձակեց»։

Ես, իբրև Կոկանդ քաղաքի դպրոցի նախկին ուսուցիչ, պարտք եմ համարում յայտնել ընթերցող հասարակութեան, որ ոչ ինձ և ոչ ուսուցչուհուն չէ արձակել հոգաբարձութիւնը, այլ մենք ենք մեր կամքով հրաժարվել։

Եւ սրան իբրև փաստ կարող է ծառայել նոյն դպրոցի տեղեկագրի հետևեալ կտորը (տպված ներկայ տարվայ «Նոր-Դպրոցի» № 23—24-ում, յունիս ամիս). «Տարվայ վերջին թէ ուսուցչուհին և թէ ուսուցիչը կամաւոր կերպով հրաժարվել են իրանց պաշտօններից, առաջինը ուսուցչական ասպարէզը թողնելու պատճառով, իսկ երկրորդը մասնաւոր պաշտօնի անցնելու նպատակով»։

Կոկանդի դպրոցի նախկին ուսուցիչ՝
Հայրապետ Ղազարեան

Մերվ, 9 օգոստոսի

Դժգոհութիւնների տեղիք չը տալու համար, սրանով գալիս եմ յայտնելու, որ «Մշակի» № 169-ում լոյս տեսած յօդուածիս մէջ—«Թղթակից-ուսուցիչները խնբիգանները»—պարզել են որոշ անճշդութիւններ, որոնք հաղորդված են եղել թիւրիմացութեամբ։

Արդ՝ բարեխիղճ թղթակցի սուրբ պարտականութիւնը ինձ ստիպում է տեղիս թէ հոգաբարձութեան և թէ մասնաւոր անհատների ներողամտութիւնը հայցելու։

Sero

Դիլիջան, 13 օգոստոսի

Թոյլ տուէք, խնդրում եմ, ձեր թերթի միջոցով յայտնել ինձ դիմողներին, որ Ատրպատականի կենտրոնական դպրոցի ուսուցչական խումբը կազմված է։ Ինձնից հրաւէր չը ստացողները ազատ են։

Յ. Յոնան Դաւթեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ 4-րդ Պետական Դումայի գումարումը տեղի կունենայ նոյեմբերի 15—20-ը։

✦ Բարձրաստիճան մի անձ «Вечерн. Время» թերթի աշխատակցի հետ խօսելիս շեշտել է, որ անհրաժեշտ է պրէմիէրութեան և ներքին գործերի մինիստրի պօրտֆէյլները միացնել։ Ներկայումս մինիստրների խորհրդի մէջ ծագած տարաձայնութիւնները նմանում են Վիտտէի մինիստրութեանը, երբ վերջինս յաճախ ընդդէմ էր լինում ներքին գործերի մինիստր Դուրնովոյին։ Այժմ պրէմիէր Կոկովցեվի դրութիւնը մանաւանդ դժուարին է դառնում նրանով, որ Պետական Դումայի բացումին անհրաժեշտ է ամբողջ կաբինէտի անունից դեկլարացիա ներկայացնել։ Մինչդեռ իրերի ներկայ դրութեան մէջ Կոկովցեվը չէ կարող երաշխաւորել մինիստրների միաբան գործակցութիւնը, որովհետև իւրաքանչիւր նիստում արմատական տարաձայնութիւններ են ծագում։

✦ Մայրաքաղաքի թերթերի ասելով, «Нов. Вр.»-ի հանգուցեալ խմբագիր Ա. Ս. Սուվորինը թողել է առաձեռն 3 միլիոն ռուբլի կարողութիւն, բացի դրանից մի տուն Էրտելէվի նրբաթաղոցում, և 3 կալուած Տուլայի նահանգում, Ղրիմում և Կովկասում։ Սուվորինը երկու տարի առաջ «Нов. Вр.» լրագրի հրատարակչութիւնը դարձրեց «Ընկերութիւն Ա. Ս. Սուվորին—«Нов. Вр.» 3 միլիոն ռուբլու հիմնական դրամագլխով։ Բաժինների $^{2}/_{3}$-ը վերցրեց ինքը։ Մնացեալ բաժնետէրերի մէջն են Մենշիկովը (100,000 ռ.), Ա. Սոսլիպինը (50,000 ռ.), պատգամաւոր Ն. Շուբինսկի (120,000 ռ.), Ա. Գուչկովը (25,000 ռ.), պատգամաւոր Կրուպէնսկին (25,000 ռ.)։ Հրատարակչի մահից յետոյ էլ թերթը հրատարակվելու է նոյն կազմով։

✦ Բարձրագոյն դպրոցները մտնողների թիւը օրէ-օր կրկնապատկվում է, մինչդեռ ազատ տեղեր անհամեմատ սակաւ են։ Ճանապարհների հաղորդակցութեան ինստիտուտը մտնելու համար 150 ազատ տեղի համար ստացված է 881 խնդիր, լեզուագիտական ինստիտուտում 30 տեղի համար՝ 108, տեխնօլոգիականում 220 տեղին՝ 1600, պօլիտեխնիքականում 1200-ին՝ մօտ 4000 խնդիր։

✦ Եկատերինօսլաւի նահանգապետը միջնորդութիւն է յարուցել ընտրութիւնների համար հրէաներին առանձին կուրիայի բաժանելու, որովհետև նրանք կազմում են ընտրողների 40 տոկոսը և այդպիսով ապահովում են պրօգրեսիստների յաղթանակը։

✦ Օդեսայի գաւառում ընդարձակ չափեր է ստանում սիբիրական ախտը։ Զեմստվոն շտապով օգնութիւն է կազմակերպում ազգաբնակութեան համար։

✦ Հոմից Շվէյցարիա է ուղևորվել՝ խաղաղութիւն կնքելու համար սկսված բանակցութիւններին մասնակցելու նպատակով՝ Լուցատին։

✦ Վիէննայի դիպլոմատիան հերքում է Բերլինից ստացված այն լուրը՝ թէ Բ. Դուռը մերժել է Բերհտոլդի առաջարկը։ Պաշտօնական թերթը զբաղվում եղանակով մատնանշում է, որ Թիւրքիայի համաձայնութիւնը բոլորովին էլ հարկաւոր չէ։

✦ Վիէննայից հաղորդում են, որ սահմանի վրա Զերնօգօրիան կենտրոնացրել է 34,000 զինուոր։ Մալիսսորները պահանջում են Թիւրքիայից խոստացված զէնքը, վախենալով որ չերնոգօրցիները կը խուժեն Մալեսսիա։

✦ Թիւրքիայի զինուորական լիգան պահանջում է կաբինէտի հրաժարականը և երկու օրվայ ժամանակամիջոցում նշանակել Քեամիլ փաշայի մինիստրութիւնը։

✦ Միացեալ Պետութիւններում մօտ ժամանակներս առևտրի և աշխատանքի մինիստրութեան յատուկ դեպարտամենտի դիրեկտոր է նշանակված տիկ. Լատրօպը։ Միաժամանակ նրան իրաւունք է վերապահված աշխատակիցներ ընտրել մշակելու օրինագիծ մանուկների աշխատանքի, երեխաների հետ անգթաբար վարվելու, երեխաների մահացութիւնը պակասեցնելու միջոցների մասին։ Լատրօպը սենատորի աղջիկ է և յայտնի է իր աշխատութիւններով սոցիալական օրէնսդրութեան վերաբերեալ։

✦ Թէ բէկլամը ինչ հրէշաւոր չափերի է հասել Ամերիկայում, ապացոյց հետևեալ դէպքը։ Նորերս Նիւ-Եօրկում էլեքտրականութեամբ մահապատժի ենթարկված հինգ խտալացիների դիակները թաղումն կատարող ֆիրմաներից մէկը բէկլամի համար ի ցոյց էր դրել։ Ցեմնելու համար մուտքը վճարովի էր, և այդ ցուցահանդէսը ամենայն օր հազարաւոր այցելուներ էր գրաւում, մինչև որ սանիտարական իշխանութիւնը հարկաւոր համարեց վերջ տալ այդ խայտառակ ցուցահանդիսին, կարգադրելով անմիջապէս թաղել դիակները։

✦ «Нов. Вр.» լրագիրը հաղորդում է, որ Եպպօնիայի միկադօն մեռել է սանրնական ժահով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

15 օգոստոսի

ԲԵՐԼԻՆ։ Հեռագրական հաղորդակցութիւնը Անգլիայի հետ վերականգնված է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արգելք է դրված „Гроза“ լրագրի վրա՝ իր օգոստոսի 15-ի համարում «Քաղաքային անհեթեթութիւն» ֆէլիէտոնը տպելուն համար։

ՐԻՎԱ։ Հարաւային Տիրոլում տեղի ունեցաւ 14-րդ զօրաբանակի մանեվրը էրցհերցոգ Ֆրանց-Ֆերդինանդի ներկայութեամբ և ցնծութեամբ ընդունվեց իտալական ազգաբնակութեան կողմից։

ՀԱՎԱՆԱ։ Տեղական ժուրնալիստներից մէկը ծանր կերպով վիրաւորեց ամերիկացի գործերի հաւատարմատարին իր բնակարանում։

ԼԱՆ։ Զինուորական օդաթռիչ Շանդանսէն Դուէից Շալօկ թռչելիս ընկաւ և այրվեց ապպարատի հետ միասին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԻԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Սրագ գնացքը № 2—10 ժ. 8 ր. առ., հասնում է Ադստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 58 ր., Եւլախ 4 ժ. 29 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 7 ր. երեկ., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօսուսար գնացքը № 4—12 ժ. 10 ր. գիշ., հասնում է Ադստաֆա 3 ժ. 4 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 14 ր. առ., Եւլախ 8 ժ. 13 ր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 48 ր. ցերեկ., Բագու 5 ժ. 20 ր. ցեր.։ Մարդասար գնացքը № 6—2 ժ. 44 ր. ցեր., հասնում է Ադստաֆա 5 ժ. 34 ր., Գանձակ 8 ժ. 42 ր. երեկ., Եւլախ 10 ժ. 39 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 21 ր. գիշ., Բագու 7 ժ. 38 ր. առ.։ Խառն գնացքը № 106 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարևորութիւն զգացվի)—4 ժ. 37 ր. գիշ., հասնում է Ադստաֆա 8 ժ. 44 ր. առ., Գանձակ 1 ժ. 5 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 13 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 11 ժ. 45 ր. գիշ., Բագու 5 ժ. 54 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄ.—Սրագ գնացքը № 11—10 ժ. 44 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 40 ր. գիշ., Բաթում 8 ժ. 58 ր. առ.։ Պօսուսար գնացքը № 3—9 ժ. 41 ր. ցեր., հասնում է Միխայլօվո 1 ժ. 59 ցեր., Բաթում 11 ժ. 36 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 5—6 ժ. 36 ր. եր., հասնում է Միխայլօվո 10 ժ. 38 ր. գիշ., Բաթում 7 ժ. 26 ր. առ.։ Խառն գնացքը № 107 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարևորութիւն զգացվի) 6 ժ. 18 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 32 ր. ցեր., Բաթում 4 ժ. 31 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօսուսար գնացքը № $^{74}/_{75}$—12 ժ. 40 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 54 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 24 ր. ցեր., Էջմիածին 4 ժամ 40 րօպ. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 7 ր. ցերեկվայ (առանց երևան մտնելու), Նախիջևան 9 ժ. 50 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 21 ր. գիշ., Մարդասար-ապրանքասար գնացքը № $^{78}/_{79}$ (միայն II և III կարգի վագոններով)—7 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 2 ժ. 18 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 5 ժ. 56 ր. գիշ., Էջմիածին 11 ժ. ցեր., Ուլուխանլու 11 ժ. 26 ր., Երևան 12 ժ. 19 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքասար № $^{108}/_{109}$—11 ժամ 28 րօպ. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 28 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 27 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 40 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 15 ր. առ., Երևան 7 ժ. 23 ր. առաւօտեան։

ԲՈՐԾՕՄ.—Մարդասար գնացքը № $^{7}/_{8}$—7 ժ. 58 ր. առ., հասնում է Ֆօրի 10 ժ. 43 ր., Բորժօմ 1 ժ. 39 ր. ցեր., Մարդասար գնացքը № $^{9}/_{10}$—3 ժ. 5 ր. ցեր., հասնում է Ֆօրի 5 ժ. 48 ր. ցեր., Բորժօմ 8 ժ. 41 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒՄԻՑ.—Սրագ գնացքը № 1—9 ժ. 56 ր. եր., Պօսուսար գնացքը № 3—8 ժ. 56 ր. առ.։ Մարդասար գնացքը № 5—5 ժ. 51 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—4 ժ. 56 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Սրագ գնացքը № 12—9 ժ. 18 ր. առ.։ Պօսուսար գնացքը № 4—11 ժ. 15 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 6—1 ժ. 59 ր. ցեր.։ Խառն գնացքը № 106—3 ժ. 40 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօսուս. գնացքը № $^{72}/_{73}$—7 ժ. 26 ր. առ., Մարդասար-ապրանքասար գնացքը № $^{74}/_{75}$—8 ժ. 33 ր. եր.։ Մարդ.-ապրանքասար գնացքը № $^{80}/_{81}$—12 ժ. 48 ր. ցեր.։

ԲՈՐԾՕՄԻՑ.—Մարդասար գնացքը № $^{7}/_{8}$—7 ժ. 8 ր. առ., մարդասար գնացքը № $^{9}/_{10}$—9 ժ. 8 ր. երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս է տեսել (Գ. տիպ)
Մ. ՏԱՐԱԽՋԵԱՆԻ
ՁԵՌՆԱՐԿ
ԹԵԼԱԳՐՈՒԹԵԱՆ
— ԵՒ —
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
(ռուսերէն տերմիններով)
Գինն է 15 կօպ.
Դիմել՝ Баку, Книжн. маг. «Посредникъ», Парапетъ և Թիֆլիսի «Գուտենբերգ», «Գիր» և «Կենտրոնական» դրախանութներին։
(Ե. ու.) 595. 10—1

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑՆԵՐԻ
Թիֆլիսում (Նիկոլայէվսկայա փող. № 36, Վօրոնցօվի արձանի մօտ)։
Մանրամասն տեղեկութիւններ տրվում են Կուրսերի վարիչատանը ամեն օր՝ երեկոյեան ժամը 4—7-ը։
(ա.օ.) 579. 25—5

ՁԱՐԹԱԼԱՅԻ հայոց ծխ. երկս. դպրոցի համար հարկաւոր են՝
Ներսիսեանաւարտ կամ ճեմարանաւարտ
խմբապետ-ուսուցիչ,
որ վարելու է եկեղեցու երգեցիկ խումբը և ունենալու 26 դաս, ռոճիկ դասերի համար 500 ռ., խմբապետութեան՝ 90 ռ., և
մի վարժուհի գիմնազիաւարտ, 26 դաս, 500 ռուբլի։
Դիմել հոգաբարձութեանս։
Հոգ. նախագահ՝ Մ. Մելքումեան
(ա.օ.) 591. 4—3

ԹԷՈԴՈՍԻԱՅի Հայոց Աղքատախնամ Հոգաբարձութեան ԿԱՐՈՒՋԵԻԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ համար հարկաւոր է աւարտման վկայականով
ՄԻ ՀՄՈՒՏ և ՓՈՐՁԱՌՈՒ
ՎԱՐՊԵՏՈՒՀԻ
Ռոճիկ ամսական 30 ռուբլի, բնակարան և վառելիք։ Մանրամասն տեղեկութեան և վկայականի ներկայացման համար դիմել՝ Ѳеодоссія, Священнику Армяно-Григоріанской церкви Варданянцу.
(ա.օ.) 596. 4—1

ԱՆԴԻԺԱՆԻ հայոց ծխ. երկդ. դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՄԷԿ ՈՒՍՈՒՑԻՉ
✦ ԵՒ ✦
ՄԷԿ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
25 ական դասերով, դասագինը 25 ռուբլուց։ Ցանկացողները կարող են դիմել Հոգաբարձութեան հետևեալ հասցէով. Андижанъ, Армянскому Церк.-Прих. Попечительству.
(ա. օ.) 597. 3—1

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻ
հայոց դպրոցի համար հարկաւոր է
ՈՒՍՈՒՑԻՉ-ԽՄԲԱՊԵՏ
հետևեալ պայմաններով.
1) Շաբաթական 6 դաս.
2) Եկեղ. քառաձ. խմբի խմբապետութիւն.
3) Շաբաթական 3 օր վերակացութիւն
Ռոճիկ 600 ռուբլի։
Դիմել Հոգաբարձութեան։

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
„ՄԵՐ ՈՒՂԻՆ“
(Ժողովածու, 160 մեծադիր էջ)
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—1) Դ. Անանուն. «Հայ տպագրութեան 400-ամեակի առթիվ»։ 2) Լ. Աթաբէկեան. «Եհովա»։ 3) Արտաշէս Տիրացեան. «Թիւրքահայոց ապագ. սահմանադրութեան իրաւաբանական հիմունքները»։ 4) Շ. Կուրդինեան. «Բնական թագամասում»։ 5) Հ. Հէյնէ. «Enfant perdu», թարգմ. Դ. Նորեկ։ 6) Կարլ Կաուցկի. «Նոր լիբերալիզմ և նոր միջին դասակարգեր»։ 7) Հ. Մազմանեան. «Դու կարկաչուն ես...»։ 8) Ալ. Մարտունի. «Արդի տնտեսական կեանքը» (ա. «Կապիտալիզմը Ռուսաստանում», բ. «Ռուսական համայնքը», գ. «Մոշոր և մանր տնտեսութեան հարցը գիւղատնտեսութեան մէջ»)։ 9) Դ. Անանուն. «Մենութեան մղձաւանջը» (Վ. Տէրեանի մասին)։ 10) Կոգա. «Մետաքսագործութիւնը և մետաքսագործարանների բանուորները Ղարաբաղում»։ 11) Դ. Տէր-Դանիէլեան. «Բանաստեղծութիւն»։ 12) Նոր գրքեր. ա) Օրմանեան. «Հայոց եկեղեցին», բ) Ա. Իսահակեան. «Սբոլ-լայա Մահաբի», գ) Կարէն Միքայէլեան. «Ջմրան երեկոյ», դ) Ց. Սակրեան. «Բանաստեղծութիւններ», ե) Ց. Սօլօվեան. «Քննադատական տեսութիւններ», զ) «Գեղարուեստ», 4-րդ գիրք։ 13) Արտաշէս. «Հերման Գրէօլիխ»։ 14) Արսէն Կիտուր. «Թիւրքիայի կեանքից»։ 15) Մրք. Շամչեան. «1912 թ. պետական բիւջէն»։ 16) Յայտարարութիւններ։
Գինն է Բագուում՝ 50 կ., ճանապարհածախսով՝ 60 կօպ.։
Դիմել՝ «Պօսրեդնիկ» գրավաճառանոցին Բագուում, «Գիր» գրավաճառանոցին Թիֆլիսում։
(օ. մ.) 578. 3—3

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ Բարձնակայա փողոցի վրա գտնված դպրոցական հին շէնքը տրվում է վարձով։ Նոյնպէս Գրաֆսկայա փողոցում երեք բնակարան, որոնցից 2-ը 7-ական սենեակից, իսկ 1-ը 4 սենեակից բաղկացած՝ ջրով ու լուսամով։ Երկու խանութ Սօլդատսկի բազարում, 1 խանութ Պուշկինսկայա փողոցում և 3 խանութ Գրաֆսկայա փողոցում։ Եօթն տեղ Փիրոյեանի շէնքի պասաժում և 7 խանութ գաւթում։ Ցանկացողները կարող են դիմել դպրոցիս կառավարիչ Գասպարեանին։
(ու. կ.) 592. 3—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный